

ԵԱՀ ՄԵՋՔՅԱՆ ԱՐԳԱՎՈՐԱԿԱՆ ԵՐԱՎԱՐԱԿԱՆԻ ՊԵՏԱ ԹՅՈՒՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՋԻՐԵԼՎԱԿԱՆ ԲԱԽՏՏԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴՈՒՄՆ ԳՈՏԱՎՈՐԻ ՅԵՎ, ԺՈՂՈՎՐԴՈՒՄՆ ԱՏԵԼԵԳՈՒՄ
ԳՐԱԴԱՐԱՆՆ

34c
Մ-61

Ա. Գ. Մ Ե Ն Շ Ա Գ Ի Ն

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Ի. Տ. ԳՈՂՅԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ

343
Մ-61

ՐԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՀ ԱՐԴՔՈՂԿՈՄԱՆ
ՏԵՐԵՎԱՆ • 1940

ԽՍՀ ՄԻԱՆԹՅԱՆ ԱՐԴՅՈՂԿՈՒՄԱՏԻ ԵՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՅՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽԵՍՏԱՏՈՒՏ 01 MAR 2010

ՔՈՂՈՎՐԴՈՒՄԿԱՆ ԴԱՏԱՎՈՐԻ ՁԵՎ ՔՈՂՈՎՐԴՈՒՄԿԱՆ ԱՏԵՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

343

5-61

Վ. Գ. Ա Ե Ն Շ Ա Գ Ի Ւ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԽԵՏԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Ի. Տ. ԳՈԼՅԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԻՔ

3842/240/849 2535



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՐԴՅՈՂԿՈՒՄԱՏԻ
ՑԵՐԵՎԱՆ • 1940

28 JUN 2013

36.173

Վերջին ժամանակները դատական որդանները համալրվել են ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների նոր կազմով, վրոնք դնելու բավարար չափով ծանօթ չեն խորհրդային որենսդրությանն ու չունեն դատական աշխատանքի անհրաժեշտ փոքրձ: Այդ ընկերներին ոգնություն և պետք, վորպեսզի նրանք արագ կերպով կարողանան տիրապետել զործին, ընդգրկեն դատական աշխատանքի հիմնական հարցերը, կողմնորոշվեն դատարանի առաջ դրված խնդիրներում:

«Ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալի դրադաբան»-ի լույսընծայումը զգալի չափով կրացնի արդարադատության մարմինների իրավաբանական հանրամատչելի դրականության բացը և եական ոժանդակություն ցույց կտա ժողովրդական դատավորին և ժողովրդական ատենակալին՝ նրանց զործնական աշխատանքում:

Գրադարանը բազկացած և բրեկան և քաղաքացիական էրավունքի, դատական իրավունքի առանձին հարցերին և ժողովրդական դատարանի աշխատանքների այլ առանձին հարցերին նվիրված մեջ շարք դրվերից:

Իրավաբանական հրատարակչությունը խնդրում է ընթերցողներին լույս ընծայվող գրադարանի վերաբերյալ իրենց կարծիքն ու դիտողություններն ուղարկել հրատարակչությանը:



920 - 93

Գ. Ա. Խ. Խ.

ԽՍՀՄ-ի ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՆՊԱՍՏԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԱՄՐՈՑՄԱՆ ՈՒ ՈՒԺԵԳԱՑՄԱՆԸ

Տնտեսական-կազմակերպչական ու կուլտուր-գաստիւրական խորհրդային այլարատություն և այլ այլարատի պաշտոնատար անձերի ոգնությամբ և վողջ խորհրդային ժողովրդի ամենաակտիվ մասնակցությամբ: Խորհրդային պետական ապարատի ու ժողովրդական մասսաների անխորհիք կազմ սոցիալիստական դեմոկրատիզմի ամենանշանակոր առանձնահատկություններից մեկն ե հանդիսանում:

«...Խորհրդային պետական ապարատը ձուլվում է մասնաներին, վորովհետեւ նա չի կարող և չզետք և մասսաներից բարձր լինի կանոնած, յեթե նա ուղում և պաշտօպանել իրեն վորպես խորհրդային պետական ապարատ, վորովհետեւ նա չի կարող խորթ լինել այդ մասսաներին, յեթե նա իրոք ցանկանում է ընդգրկել աշխատավարների միջնավոր մասսաները: Արանումն է խորհրդային ապարատի սկզբունքային տարբերություններից մեկը բուրժուական պետության ապարատից» (Ստալին, Վորոք լենինհեմա, изд. 9-е, стр. 148): Յեկ իրոք, խորհրդային ժողովրդի բայն ներքրավումը պետության կառավարման մեջ, աշխատավոր մասնաների մշտական վերահսկողության սահմանումը պետական ապարատի գործունեյության նկատմամբ լրիվ չափով ապահովում են իշխանության որդանների սերտ կապն աշխատավոր մասսաների հետ: Սոցիալիստական պետության մեջ պետության կառավարման գործին մասնակից են ար-

ված միլիոնավոր մարդկեց կուտանսություններից, Հիմնարկներից, գործարաններից:

Վերապահելով աշխատավոր մասսաներին լայն իրավունք մասնակցելու պետության կառավարմանը, խորհրդային որդենքը միաժամանակ և պարտականություն ե զնում ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիների վրա՝ ամեն կերպ նպաստելու խորհրդային պետական ապարատի, նրա կանոնավոր դորժուներության և խորհրդային իշխանության բոլոր որդաների զարձունելության ամրացմանն ու ուժեղացմանը: Խորհրդային քաղաքացիների այդ պարտականությունն ուղղակի և անմիջականորեն բղխում ե Ստալինյան Սահմանադրության 130-րդ հոդվածից, վորն ասում է՝ «ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, աշխատանքի կարգավահություն պահպանել, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարուղը, հարդել սոցիալիստական համակեցության կանոնները»:

«Սոցիալիստական պետականության ամրացման ամենառեալ միջոցը—ասում ե ընկ. Կալինինը—դա որևէքների պահպանումն և իշխանության որդաների, հասարակական կազմակերպությունների և յուրաքանչյուր քաղաքացու կյանքի և գործունելության բոլոր բնադրվածներում» (Կալինին, ճառ Համեկ(ր)ե ԽVIII համագումարում, էջ 8): ԽՍՀՄ-ում ընդհանուր, ուղղակի և հավասար ընտրական իրավունք՝ դադանի քիևարկությունը մատցնելը դատիքարակում և յուրաքանչյուր խորհրդային քաղաքացու մեջ այն գիտակցությունը, վոր նա ունի վոչ միայն իրավունքներ, այլ և պարտականություններ:

Այդ պարտականություններից ամենաառաջինը հանդիսանում է խորհրդային պետական ապարատի, իշխանության խորհրդային որդաների ամրացմանն ու ուժեղացմանը նըստամակը:

Յուրաքանչյուրը, ով այս կամ այն ձեռվ վորոնձուաթյուն և անում խորհրդային պետական ապարատի, իշխանության խորհրդային որդաների ամրացմանն ու ուժեղացմանը նըստամակը:

Թյունը—հանցաղործություն ե կատարում: Խնչուեա Թիթօչ Ք. Որ., նույնպես և միութենական մյուս հանրապետությունների Ք. Որ. հատուկ գլուխներ կան, վորոնք նախատեսում են նման վունածգություններ խորհրդային պետական ապարատի գործունեյության, իշխանության խորհրդային որդանների գործունեյության դեմ: Այդ վոտնածգությունները կոչվում են «վարչակարգի դեմ ուղղված այլ հանցաղործություններ» և նախատեսված են Թիթօչ Ք. Որ. Որ. II. Պ. վարչակարգի դեմ ուղղված այլ հանցաղործությունների:

Այս բրոցյուրում քննիլում են վարչակարգի դեմ ուղղված վոչ բոլոր հանցաղործությունները, այլ միմիայն նրանք, վորոնք անմիջականորեն կապված են իշխանության որդանների կանոնավոր և նորմալ գործունեյության խախտման հետ: Այդպիսի հանցաղործություններ են՝ իշխանությանը չենթակվելը, իշխանությանը դիմադրելը, իշխանության ներկայացուցիչներին բացահայտ ապրինի գործողություններ կատարել որնագատելը, իշխանությանը վիրավորելը, իշխանություն յուրացնելն ու միքանի այլ հանցաղործություններ:

Գ 1. Ռ Խ Խ Ա

ՀԱՆՑԱՂՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԸՆԱՇԱԽԻԹՑԱՆ ԱՐԴԱՆՆԵՐԻ ԴԵՄ, ՎՈՐՈՌԵ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՆ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՔԲԵՍԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Թիթօչ Ք. Որ. 591 հոդ.² այսպես ե բնորոշում վարչակարգի դեմ ուղղված հանցաղործությունները՝

«Վարչակարգի դեմ ուղղված հանցաղործություն ե համարվում ամեն մի արարք, վորն անմիջականորեն ուղղված չինելով Խորհրդային իշխանության և Բանվորա-դյուլացիական կառավարության գոյության դեմ, այնուամենայնիվ խանդարում և վարչական կամ ժողովրդական տնտեսության մարմինների կանոնավոր գործունեյությունը և զու-

¹⁾ Հայկական ԽՍՀ Ք. Որ. 85—134 հոդ. հոդ.:

²⁾ Նույն տեղում, 72 և 85 հոդվածները:

դորդվում և իշխանության մարմիններին ընդդիմանալու, նրանց գործունեյությանը խոչընդուա հանդիսանալու, որենք-ներին չենթարկելու և իշխանության ուժն ու հեղինակու-թյունը թուլացնող այլ գործողությունների հետ»:

Այս բնորոշումից յերեսում են, վոր վարչակարգի դեմ ուղղված յուրաքանչյուր հանցագործությունը հանդիսանում է հանրայնորեն վտանգավոր արարք, վորը խախտում է խորհրդային պետական ապարատի կանոնավոր և նորմալ գործունեյությունը:

Հանցագործություն իշխանության որգանների դեմ պետք է համարել յուրաքանչյուր հանրայնորեն-վտան-գավոր արարք, վորն այս կամ այն չափով խախտում է իշ-խանության որգանների նորմալ գործունեյությունը կամ վորը քողացնում է իշխանության որգանների ուժն ու հե-դիմակությունը: Այդպիսի հանցագործություններ են՝ իշ-խանության չենթարկվելը, իշխանության ներկայացու-ցիչներին դիմադրելն ու իշխանության ներկայացուցիչներին բացահայտ ապրինի գործողություններ կատարել բնա-դատելը:

Թված բոլոր հանցագործությունների համար բնորոշ և իշխանության որգանների (որինակ, միլիցիայի, դատարա-նի, դատախազության և այլն) կանոնավոր և նորմալ գոր-ծունեյության խախտումը:

Իշխանության որգանների դեմ ուղղված պետք և հա-մարել այնպիսի հանցագործություններ, ինչպես իշխանու-թյան ներկայացուցիչներին վիրավորելը, իշխանություն-յուրացնելն ու ինքնիրավությունը, քանի վոր այդ բոլոր հանցագործությունները կարող են իշխանության խորհրդա-յին որգանների ուժի և հեղինակության թուլացում առաջ բերել:

Անհրաժեշտ է խասորեն սահմանագծել իշխանության որգանների դեմ ուղղված հանցագործություններն ու հակա-հեղափոխական հանցագործությունները (ԹիֆՍՀ Քր. Որ. 58¹—58¹⁴ հոդ. հոդ.)¹⁾: Տարբերությունն այդ յերկու հան-ցագործությունների միջև կայանում է հետեւյալում: — Հա-

կահեղափոխական հանցագործությունների — խորհրդային պետության դեմ ուղղված այդ ամենածանր հանցագործու-թյունների դեպքում վոտնաձգությունն անմիջականորեն ուղղված է դեպի «Բանվորա-գյուղացիական խորհուրդ-ների ու նրանց կողմից ԽՍՀ Միության Սահմանադրու-թյան և մյուս միութենական հանրապետությունների սահ-մանադրությունների հիման վրա ընտրված ԽՍՀ Միության, միութենական և ավտոնոմ հանրապետությունների բանվո-րա-գյուղացիական կառավարությունների» (ԹիֆՍՀ Քր. Որ. 58¹ հոդ.) տապալումը, խախտումը կամ թուլացումը:

Իշխանության որգանների դեմ ուղղված այն հանցա-գործությունների դեպքում, վորոնք նախատեսված են վարչակարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների վե-րաբերյալ պլանը, վոտնաձգություններն ուղղված են մի-միայն դեպի իշխանության որգանների կամունավոր գործու-նեյության խախտումը:

Այսպես, որինակ, իշխանության կամ հասարակության ներկայացուցչի (общественник) պահանությունը, վոր կա-տարել և ժողովրդի թշնամին բանվոր դասակարգի դիկտա-տուրան թուլացնելու նպատակով, պետք և դիտել վորովես համահեղափոխական հանցագործություն: Իով դիմադրու-թյունն իշխանության ներկայացուցչին, որինակ, միլիցիո-ներին, վոր ցույց է տվել ձերբակարիված քաղաքացին, պետք և դիտել վորապես իշխանության որդանների դեմ ուղղ-ված հանցագործություն:

Պահետք և նաև շփոթել իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործությունները պաշտոնեական հանցա-գործությունների հետ: Յեզ իշխանության որգանների դեմ ուղղված հանցագործությունների, և պաշտոնեական հան-ցագործությունների դեպքում (ԹիֆՍՀ Քր. Որ. 109—121 հոդ. հոդ.)¹⁾ կարող է խախտվել իշխանության որդանների կամունավոր և նորմալ գործունեյությունը: Սակայն, պաշ-տոնեական հանցագործությունների դեպքում վոտնաձգու-թյուններ իշխանության որգանների դեմ անում են պաշտո-նատար անձերը, վորոնք ուղարկործում են իրենց պաշտոնա-

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 58—71ա հոդ. հոդ.:

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 135—147 հոդ. հոդ.:

կան դիբքը: Իսկ իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործությունների գեպքում (վարչակարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների վերաբերյալ գլուխը—միջնէ Քր. Որ. 60—1081 Հոդ. Հոդ.)¹⁾ իշխանության որդանների կանոնավոր և նորմալ գործունեյությունը խախտում են մասնավոր անձերը: Այսպես, որինակ, միլիցիայի բաժանմունքի հերթապահը, ողոտագործելով իր պաշտօնական գիրքը, իրեն ձևացնում ե վորպես միլիցիայի բաժանմունքի պետ և կատարում ե մի շարք գործողություններ, վորոնք միլիցիայի բաժանմունքի պետի իրավասության մեջ են մտնում: Տվյալ գեպքում տիպիկ պաշտօնեական հանցագործություն ե՝ իշխանազանցություն (ԲԽՖՍՀ Քր. Որ. 110 Հոդ.)²⁾: Այլ բան ե, յեթե մի վորքեն քաղաքացի, ձևացնելով իրեն վորպես քննիչ, խուզարկություն ե կատարում քաղաքացիների մոտ: Այս գեպքում կլինի տիպիկ հանցագործություն իշխանության որդանների դեմ—իշխանության յուրացում (ԲԽՖՍՀ Քր. Որ. 77 Հոդ.)³⁾:

Քրեական պատասխանատվությունն իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործությունների համար կարող ե տեղի ունենալ այն գեպքում միայն, յերբ մեղադրյալը դիտակցել ե, վոր նա իր գործողություններով կարող ե խախտել իշխանության որդանների կանոնավոր և նորմալ գործողությունը կամ թե թուլացնել իշխանության որդանների ուժի ու հեղինակությունը: Իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության կարող ե յենթարկվել միայն 16 տարեկան հասակ ունեցող անձը:

Առհրդային քրեական որենսգործությամբ նախատեսված հանցագործություններ իշխանության որդանների դեմ հանդիսանում են.—

1) Իշխանության չենթարկվելը (ԲԽՖՍՀ Քր. Որ. 75 Հոդ.):⁴⁾

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 85—134 Հոդվածներ:

2) Նույն տեղում, 136 Հոդ.

3) Նույն տեղում, 101—102 Հոդ. Հոդ.

4) Նույն տեղում, 99 Հոդ.:

2) Իշխանության ներկայացուցիչներին ու իմադրելը (ԲԽՖՍՀ Քր. Որ. 73 Հոդ.):⁵⁾

3) Իշխանության ներկայացուցիչներին բացահայտ ապորինի գործողություններ կատարել բոնադատելը (ԲԽՖՍՀ Քր. Որ. 73 Հոդ.):⁶⁾

4) Սպառնալիք պաշտոնատար անձերի և հասարակական աշխատողներին (ԲԽՖՍՀ Քր. Որ. 73¹ Հոդ. 1 մաս):⁷⁾

5) Բնությունների պաշտոնատար անձերի և հասարակական աշխատողների վերաբերմամբ (ԲԽՖՍՀ Քր. Որ. 73¹ Հոդ. 2 մաս):⁸⁾

6) Իշխանության ներկայացուցիչներին վիրափորելը (ԲԽՖՍՀ Քր. Որ. 76 Հոդ.):⁹⁾

7) Իշխանության յուրացումը (ԲԽՖՍՀ Քր. Որ. 77 Հոդ.):¹⁰⁾

8) Բնքնիրագչությունը (ԲԽՖՍՀ Քր. Որ. 90 Հոդ.):¹¹⁾

1. ԽԵԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՆԹԱՐԿՎԵԼԸ

ԲԽՖՍՀ Քր. Որ., ինչպես նաև միութնական մյուս հանցագործությունների Քր. Որ., նախատեսված, իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործություններից մեկը հանդիսանում է իշխանությանը չենթարկվելը (ԲԽՖՍՀ Քր. Որ. 75 Հոդ.):¹²⁾

Տվյալ հանցագործության վտանգավորությունը նրանում է, վոր իշխանությանը չենթարկվելու ամեն մի դեպք կարող ե խախտել իշխանության որդանների կանոնավոր և նորմալ գործունեյությունը:

ԲԽՖՍՀ Քր. Որ. 75 Հոդ. իշխանությանը չենթարկվելու հանցագործը ձեւակերպում է այսպես՝ «իր պաստում կանոնած զինուրական պահակի կամ հասարակական կարգը պահպանող այլ իշխանությունների որինական կարգադրու-

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 97 Հոդ.

2) Նույն տեղում, 1 մ.

3) Նույն տեղում, 2 մ.

4) Նույն տեղում, 101 Հոդ.

5) Նույն տեղում, 102 Հոդ.

6) Նույն տեղում, 115 Հոդ.:

թյուղները կամ պահանջները չկատարելը...»։ Այսպիսով, քրեական որենքը նկատի ունի միմիւայն իշխանության այն ներկայացուցիչների կարգադրություններն ու պահանջները չկատարելը, վորոնք պահպանում են հասարակական կարողությունը։ Հետևապես, որինակ, իր պաստում կանոնած միլիցիոների այս կամ այն պահանջները չկատարելը պետք է գիտել վորպես հանցագործություն (ՌԽՖՍՀ Քր. Որ. 75 Հոդ.)։

Սակայն չի կարելի իշխանության ներկայացուցիչների յուրաքանչյուր պահանջ կամ կարգադրություն չկատարելը դիտել վորպես հանցագործություն։ Քրեական որենքը խոսում է որինական պահանջներ ու կարգադրություններ չկատարելու մասին, և դա հասկանալի յէ, քանի վոր իշխանության որդանների ապորինի պահանջներն ու կարգադրությունները չկատարելը վոչ միայն վտանգվոր չե, այլև մի շաբթ գեղքերում սոցիալապես-ոգտակարեն, վորչափով այլպիսի չկատարմամբ կանխվում է իշխանության առանձին ներկայացուցիչների ապորինի գործողությունը։

ՌԽՖՍՀ Քր. Որ. ցուցումներ չի տալիս այն մասին, թե ինչում կարող են կայանալ կամ ինչի կարող են վերաբերի իշխանության ներկայացուցիչների որինական պահանջներն ու կարգադրությունները։ Դրա համար իշխանության ամեն մի որինական պահանջ չկատարելը, ինչի եւ դա վերաբերի, կարելի յէ դիտել վորպես քրեականորեն-պատճելի արարք։

Քրեական պատասխանառություն քննվող հանցագործության համար կարող է տեղի ունենալ այն դեպքում միայն, յերբ իշխանության ներկայացուցիչ պահանջը չկատարող գիտակցել է, վոր նա իր անզործությամբ չի կատարում իշխանության այն որգանների որինական պահանջները, վորնիք պահպանում են հասարակական կարգն ու անվանությունը։

Յեթե իշխանության որդանների որինական պահանջները չի կատարում պաշտօնական անձը, վորը միաժամանակ չի կատարում այնպիսի պաշտօնեական դործողություններ, վոր ըստ իր աշխատանքի բնույթի պետք է կատարել, առկա կլինի պաշտոնեական հանցագործություն-

իշխանության անգործություն (ՌԽՖՍՀ Քր. Որ. 111 Հոդ.)¹⁾։ Այսինակ, միլիցիոնները չե կատարում միլիցիայի իր բաժան-մունքի պետի կարգադրությունը։

Իշխանությանը չենթարկվելլ պատժվում ե ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. ազատազրկումով կամ աշխատանքային-ուղղիչ աշխատանքներով մինչև 3 ամիս ժամանակով կամ տուգանքով մինչև 300 ռուբլի։

Հարկավոր ե նկատի ունենալ, վոր այն դեպքերում, յերբ իշխանության չենթարկվելլ բացահայտորեն չնչին էր և վորին վնաս չի պատճառել իշխանության որգանների ճիշտ և նորմալ գործունեյությանը, դատարանները պետք է կարգեն այդպիսի գործերի հետապնդումը ՌԽՖՍՀ Քր. Որ. 6-րդ Հոդվածի ծանոթության հիման վրա։ Այդպիսի գեղքերում մեղադրյալի վրա կարելի յէ տուգանք դնել վարչական կարգով։

Իշխանությանը չենթարկվելու մասնակի դեպք հանդիպանում է «իշխանության տեղական որգանների պարտադիր գործուների խափառումը, վորոնք հրատարակվում են իշխանության տեղական որգանների կողմից՝ որենքով սահմանված իրավասության սահմաններում, ինչպես նաև առանձին գերատեսչությունների վորոշումների, հրամանների, հրահանգների խափառումը, վորոնք հրատարակվում են որենսդրական որդանների լիազորությամբ, յեթե նրանց մեջ հատկապես վերապահված ե վարչական տույժեր սահմաններու իրավունքը...» (ՌԽՖՍՀ Քր. Որ. 192-րդ Հոդ.)²⁾։

Իշխանության չենթարկվելու այդ տեսակը պատասխանառություն է հետեւյնում վոչ թե քրեական կարգով, այլ միայն վարչական։ Այդինիւստրատիվ տույժը, համաձայն ՌԽՖՍՀ Քր. Որ. 192-րդ Հոդվածի, կարող է դրվել աշխատանքային-ուղղիչ աշխատանքների մինչև 1 ամիս ժամանակով կամ տուգանքի մինչև 100 ռուբլի։

2. ԽԾԵԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԴԻՄԱԴՐԵԼ

Վարչակարգի գեմ ուղղված ամելի վահանգավոր, քան իշխանության չենթարկվելլ, հանցագործություն է հան-

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 137 Հոդ.

2) Նույն տեղում, 225 Հոդ.

դեսանում իշխանության ներկայացուցիչներին դիմադրելը, վորը նախատեսված և ՌԽՖՍՀ Քր. Որ. 73 հոդ. և միութենական մյուս հանրապետությունների Քր. Որ. համապատասխան հոգվածներով¹⁾:

Իշխանության ներկայացուցիչներին դիմադրելու առանձնակիր վտանգն այն է, վոր այն անձնավորությունը, վորը կատարում և այդ հանցագործությունը, արգելակում և իշխանության որդաններին կատարել որենքով նրանց վրա պայմանագրությունները:

Յեթե իշխանությանը չենթարկվելու դեպքում այս կամ այն անձը լոկ գաղարում է գործելուց (եօնդեյտեսություն), չկատարելով իշխանության ներկայացուցիչների պահանջները, ապա իշխանության դիմադրելու դեպքում տվյալ անձն իր ակտիվ գործողություններով արդելակում և իշխանության ներկայացուցչին կատարել որենքով նրա վրա գրված պարագաներությունը: Արինակ, միլիցիոնների կողմից խուլղանին բռնելու և նրան միլիցիայի բաժանմունք տանելու դեպքում խուլղանը այս կամ այն յեղանակով դիմադրությունը և ցույց տալիս միլիցիոններին, դուքս և պրօնում, համառում և այլն, կամ դատական կատարածություն, վորն իր ձեռքում ունենալով սենյակը վերցնելու մասին դատարանի վճիռ՝ ներկայացել և դատարանի վճիռը ի կատար ածելու համար, բաց չեն անում բնակարանի գուոր:

ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածի մեջ առմում և իշխանության ներկայացուցիչներին դիմադրելու մասին: Դրանից հետևում է, վոր որենքը նկատի ունի այնպիսի դիմագրություն, վոր ցույց և արգում վոչ ամեն մի պաշտոնատար անձի, այլ միայն իշխանության ներկայացուցչին: Իշխանության ներկայացուցչի անվան տակ պետք և հաւականալ միայն այն պաշտոնատար անձնավորություններին, վորոնք առանձին քաղաքացիների հետ ունեցած հարաբերություններում այս կամ այն չափով ներկայացնում են իշխանության որդաններ: Աւատի իշխանության ներկայացուցիչների թիմին պետք է վերադրել միլիցիոններին, քրեական հետախուզության աշխատակիցներին, քննիչներին, դատա-

հազներին, դատավորներին, դատական կատարածուներին, ՆԳԺԿ ուղերատիւլ-շարային կազմի աշխատողներին, Խորհուրդների նախագահներին ու անդամներին և այլն: Միայն այն դիմադրությունը, վոր ցույց և արվում թվարկած անձնավորություններից մեկն ու մեկին, պետք է դիտել վորպես ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդ. նախատեսված հանցագործություն:

Այն դիմադրությունը, վոր ցույց և արվում իշխանության ներկայացուցիչ չհանդիսացող պաշտոնատար անձին, որինսկի խանությի վարչիչին կամ կուտնաեսության վարչության անդամին, չի կարող քրեական պատասխանառվության կանչվել ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածով:

Աւատի միանդամայն ձիշտ կերպով ԽՍՀՄ Դատախաղությունը (1935 թ.) բողոքարկեց Ս.-ի գործը ըստ մեղադրանքի ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդ. I մասի, վորի գործողություններն արտահայտվել են նրանում, վոր նա դիմադրություն եր ցույց տվել առևտություն և կոռպերացիայի ուղյունական միության նախագահին, այսինքն՝ մի անձնավորության, վորը իշխանության ներկայացուցիչ չի հանդիսանում:

Պաշտոնատար անձնավորություններին ցույց տրված դիմադրության դեմքեր, վորոնք իշխանության ներկայացուցիչներ չեն հանդիսանում, կարող են դիտվել կամ վորութեան անձի դեմ ուղղված հանցագործություն, յեթե դիմադրանական պաշտոնատար անձին դիմադրելն ուղեկցվել երանութական դործողություններով:

Պրակտիկայում հաճախ հանդիպում են միլիցիային աջակցող բրիգադների անդամներին իրենց պարտականությունների կատարման ժամանակ ցույց արվող դիմադրության դեպքերի: Հարկ է նկատի ունենալ, վոր այդպիսի դեպքերը պետք և դիտվեն վորպես իշխանության ներկայացուցիչներին ցույց արվող դիմադրություն և հետևապես քրեական պատասխանառվության կանչել ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 73 հոդվածի, վորովհետև միլիցիային աջակցող բրիգադների

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 97 հոդ.

անդամները կատարում են իշխանության ներկայացուցիչների պարտականություններ:

Սակայն այլպիսի գեղքերում պատասխանատվությունը ՌԽՖՍՀ Քր. Որ. 73 հոդվածով կարող է տեղի ունենալ մերին այն ժամանակ, յերբ միլիցիային աշակցող բրիգադի անդամներին դիմադրություն ցույց տվող անձը գիտակցել է, վոր այդ մարդիկ (սովորաբար արտաքին տարրերանշաններ չունեցողներ) խակազես հանդիսանում են բրիգադի անդամները և ովլալ գեղքում կատարում են այն պարտականությունները, վորոնք կազմած են միլիցիային աջակցություն ցույց տալու հետ:

Իշխանության ներկայացուցիչներին դիմադրելը, վորի մասին խոսվում ե ՌԽՖՍՀ Քր. Որ. 73 հոդվածում, կարող է խախտել իշխանության որդանների ճիշտ աշխատանքը միայն այն ժամանակ, յերբ դիմադրությունն իշխանության ներկայացուցչին ցույց է տրվում նրա կողմից պաշտանեական պարտականությունները կատարելու ժամանակ: Դիմադրությունն իշխանության ներկայացուցչին, վորը չի գըտնըլում իր պաշտոնական պարտականությունները կատարելու մեջ, չի կարող վնաս հասցնել իշխանության որդանների ճիշտ աշխատանքին, դրա համար ել չի կարող դիմուել վորպես իշխանության որդանի դեմ ուղղված հանցագործություններ: Այսպես, որինակ, տնային հանդամանքներում զանված միլիցիոններին հարեւանները թույլ չեն տալիս նախանյակում ինքնակամ կերպով տեղաշարժել հարեւանների իրերը. այդ չի կարող դիմուել վորպես դիմադրություն իշխանությանը, այսինքն՝ հանցագործություն, վոր նախատեսված ե ՌԽՖՍՀ Քր. Որ. 73 հոդվածով: Յեթ զա հասկանալի յե, վորովհետեւ իշխանության ներկայացուցչին դիմադրելը, ներկա գեղքում միլիցիոններին, այստեղ կապված չեն նրա կողմից իր պաշտոնական պարտականությունները կատարելու հերած որդանի մեջ միլիցիոններից մերի միլիցիոններից մերից: Այլ բան ե, յերբ հենց նույն միլիցիոններին դիմադրություն ե ցույց տրվում այն վայրկյանում, յերբ նա, որինակ, քննիչի հանձնարարությամբ,

բնակարանում խուզարկություն ե կատարում: Այդ գեղքում դիմադրությունն անպայման կարող է խանգարել իշխանության ներկայացուցչի՝ միլիցիոնների ճիշտ աշխատանքը և դրանով իսկ խախտել հետաքննության համապատասխան սրբանների ճիշտ գործունելությունը:

Հարկավոր է, սակայն, այդ գեղքում նկատի ունենալ, վոր քրեական որենքի մեջ խոսքը իշխանության ներկայացուցիչներին՝ որենքով նրանց վրա դրված պարտականությունների կատարման ժամանակ դիմադրություն ցույց տալու մասին է, այսինքն՝ ընդուժվում ե իշխանության ներկայացուցիչի կողմից կատարվող գործողությունների որինականությունը: Յեթե զատական կատարածուն, իր մաս ունենալով սենյակը վերցնելու մասին զատարանի վճիռը, ներկայանում ե բնակարան գատարանի այդ վորոշումը կատարելու համար և ընդուժին հանդիպում ե դիմադրության, այստեղ առկա յե այն հանցագործությունը, վոր նախատեսված ե ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածում: Իսկ յեթե զատական կատարածուն բնակարան և ներկայանում և ինքնակամ, առանց գատարանի կամ իշխանության որդանի վորեւել վճարի, աշխատում ե ազատել քաղաքացու կողմից զբաղեցրած սենյակը, և վերջինը այդ գեղքում նրան դիմադրություն ե ցույց տալիս, առաջ այսպիսի դիմադրությունը չի կարող քրեական պատասխանատվության կանչիլ ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 73 հոդվածի, վորովհետեւ ովլալ գեղքում ինքը՝ զատական կատարածուն և ապօրինի գործողությունները կատարում:

Իշխանության դիմադրելը կարող է միայն արտահայտվել ակտիվ այնպիսի գործողություններում, վորոնք անմիջականորեն արգելակում, խանգարում են իշխանության ներկայացուցիչներին կատարել իրենց պաշտանական պարտականությունները: Որինակ, իշխանության ներկայացուցչի կողմից խուզարկություն կատարելու ժամանակ վորեւել եր վերցնելու ընթացքում խուզարկվողն աշխատում ե վախճանել և վոչնչացնել այդ իրը, այսինքն աշխատում և արգելակել իրը վերցնելուն: Իշխանության ներկայացուցչի պաշտոնական գործողությունների կատարման դեմ միայն բանակոր բողոքը չի կարող դիմուել վորպես դիմադրու-

թյուն իշխանությանը։ Այդ տեսակետից միանդամայն ճիշտ է երպով ԱԽՖՍՀ Գերազույն դատարանի Քրեական-վճռաբեկ կողեգիան (1934 թ.) իշխանության դիմադրության կազմ չփառվ կ.-ի գործողություններում, վորը փողոցի շարժման կարգը խանդարելու համար միլիցիայի բաժանմունք գնալու վերաբերյալ միլիցիոների առաջարկին բանավոր բողոք հայտնեց իրեն միլիցիա առանձիւու դեմ, հենավելով աշխատանքից ուշանալու վախի վրա։

Յեթև գործողություններն իշխանության ներկայացուցչի վերաբերմամբ ուղղակիորեն չեն արգելակում նրան կատարելու իր պաշտոնական պարտականությունները, ապա այդ գործողությունները չեն կարող դիմուել վորպես դիմագրություն իշխանությանը, այլ կարող են միայն հետեւենել քրեական պատասխանառություն Քր. Որ. այլ հոգվածներով։ Արինակ, խուզաբկության ժամանակ խուզաբկվողը, չարգելակելով խուզաբկություն կատարելուն, իշխանության ներկայացուցչի հասցեին արտահայտում են նախատական, անցենզուր խուզեր։ Այդ դեպքում չի մնի դիմագրություն իշխանությանը, այլ կլինի մի հանցագործություն, վորը նախատեսված է ԱԽՖՍՀ Քր. Որ. 76 հոգվածով¹⁾ վերափորձնք իշխանությանը։

Իշխանությանը դիմադրելու ավարտված հանցագործություններն համարվում են այն մոմենտը, յերբ այս կամ այն յեղանակով խոչընդոտ և հարուցվում իշխանության ներկայացուցչին՝ որենքով նրա վրա զրկած պարտականությունների կատարմանը։ Իշխանությանը դիմադրելու հետեւանքների հարցը, այսինքն այն հարցը, թե արդյոք ցույց տրված դիմագրությունը իշխանության ներկայացուցչի գործողություններում կանգառում մտցրեց թե չմտցրեց, կարող են չառատկություն ունենալ դատարանի կողմից պատիժը վորոշելու ժամանակ։

Իշխանության ներկայացուցչին դիմագրություն ե ցույց տրվում ամենից հաճախ այն անձնավորության կողմից, վորի վերաբերմամբ իշխանության ներկայացուցչը կատարում է որինական այս կամ այն գործողությունները։ Սա

կայն իշխանությանը գիտադրելն առկա կլինի նաև այն ժամանակ, յերբ իշխանության ներկայացուցչի գործողությունները, վորոնց կատարմանը ընդգիւմանում են մեղադրյալը, նրան չեն ել վերաբերել։ Այսպես, որինակ, միլիցիոների կողմից քաղաքացուն ձերբակալելու ժամանակը դիմագրություն ցույց ե տալիս վոչ թե ձերբակալվողը, այլ նրա բարեկամը, վորն աշխատում ե խոչընդոտ հանդիսանալ միլիցիոներին ձերբակալվածին միլիցիայի բաժանմունք տանելուն։ Այդ բարեկամի գործողությունները նույնպես պետք է զիտել վորպես դիմագրություն իշխանությանը։ Յեթև դա լիապես հասկանալի յէ. իշխանության ներկայացուցչիներին՝ նրանց որինական պարտականությունների կատարմանը խոչընդոտ հարուցելու վտանգավորություններ ամեննենին չի նվազում այն բանից, թե ինչպիսի անձնավորության կողմից ե այդ խոչընդոտը հարուցվում՝ արգելոք այն անձի կողմից, վորի վերաբերմամբ կատարվում ելին իշխանության ներկայացուցչի որինական գործողությունները, թե այն անձի կողմից, վորին իշխանության ներկայացուցչի այլ գործողություններն ուղղակիորեն չելին վերաբերում։

Այն գեղքերում, յերբ իշխանության ներկայացուցչին դիմագրություն են ցույց տալիս հատ մարդիկ, ամբոխով, տոկա կլինի այլ հանցագործություն՝ մասսայական անկարգություններ, վարոնք նախատեսված են վարչակարգի զեմուղղված առանձնապես վտանգավոր հանցագործությունների բաժնում։ (ԱԽՖՍՀ Քր. Որ. 59²⁾ հոգվածում)։

Իշխանության ներկայացուցչին դիմադրելու համար քրեական պատասխանառություն կարող է լինել միայն այն դեպքում, յերբ իշխանության ներկայացուցչին դիմագրություն ցույց տվողը զիտակցում եր, վոր ինքնի իր գործողություններով խոչընդոտ ե հանդիսանում իշխանության ներկայացուցչին կատարելու որենին նրա վրա դրվագ պարտականությունները։ Այն գեղքում, յերբ քաղաքացին չեր դիմադրելում, չդիմեր, վոր ինքը դիմագրություն ե ցույց տալիս իշխանության ներկայացուցչին, սիամբամբ իշխա-

¹⁾ Հայկական ԽՍՀ Քր. Որ. 73 հոգվ.

նության ներկայացուցչին ընդունելով մասնավոր անձի տեղ, ապա տվյալ քաղաքացու գործողությունները չեն կարող գիտել վորպես ՌԱՖՍՀ Ք. Որ. 73-րդ հոդվածով նախատելված հանցագործություն։ Ճիշտ նույնպես ել պետք է վճռի հարցը նաև այն գեղքերում, յերբ իշխանության ներկայացուցչին դիմագրություն ցույց տվողը չեր յենթադրում, վոր վերջինը պանդում եր իր պաշտոնական պարտականությունները կատարելու մեջ։

ՌԱՖՍՀ, ինչպես և միութենական մյուս հանրապետությունների Քրեական որենագրքերը նախատեսում են իշխանության դիմագրելու յերկու տեսակ՝ հասարակ և ծանր։

Իշխանությանը դիմադրելու հասարակ տեսակին իշխանության ներկայացուցչի նկատմամբ բանություն չի ուղեկցում (ՌԱՖՍՀ Ք. Որ. 73-րդ հոդ. 2 մաս)։ Որինակ, քաղաքացին, վորի մոտ իշխանության ներկայացուցիչը՝ քննիչը ներկայացել է խուզարկություն կատարելու համար, խոչընդունում և հանդիսանում իրենի և փաստաթղթերի զննմանը, թույլ չաւարկ քննիչին մուտքարու նրանց։

Իշխանությանը դիմագրելու հասարակ տեսակը պատըմում և ըստ ՌԱՖՍՀ Ք. Որ. և միութենական մյուս հանրապետությունների Ք. Որ. աղաստաղրկումով կամ հարկադիր աշխատանքներով մինչև 6 ամիս ժամանակով կամ տուգանքով մինչև 500 ռուբլի։

Իշխանությանը դիմադրելու ծանր տեսակի իշխանության այնպիսի դիմագրությունն ե, վորը ուղեկցվում է իշխանության ներկայացուցչի նկատմամբ բանություն գործադրելով (ՌԱՖՍՀ Ք. Որ. 73-րդ հոդ. 1-ին մաս)։ ՌԱՖՍՀ Ք. Որ. 73 հոդ. մեջ չի հայտարեր բանությունը չեր հետապնդում խոչընդունությունները համար, կամ հարկադիր աշխատանքներով մինչև 6 ամիս ժամանակով կամ տուգանքով մինչև 500 ռուբլի։

Միութենական առանձին հանրապետությունների Քրեա-

կան Որ. մեջ (որինակ՝ Վրացական, Ռւելլահինական, Բելոռուսական և Ուզբեկական ԽՍՀ Ք. Որ.) ուղղակիորեն մատնացուց և արվում իշխանության այնպիսի դիմագրություն ցույց տալը, վորն ուղեկցվում է իշխանության ներկայացուցչի սպանությամբ, մարմարական ծանր մնացածքներով և բռնության այլ անսակներով։ ՌԱՖՍՀ Ք. Որ. 73 հոդ. 1-ին մասում հիշած բռնության տակ հարկ և հասկանալ վոչ միայն Փիղեկական բանությունը, այլ և հոգեբանական ամեն տեսակի բռնությունը, որինակ, իշխանության ներկայացուցչին սպանությունը, վախեցնելը։

Իշխանությանը դիմագրելու ծանր տեսակը տեղի յեռնենում այն ժամանակի, յերբ բանությունը իշխանության ներկայացուցչի վերաբերմամբ՝ իշխանության ներկայացուցին հասուլ ծնի, յեղանակի խոչընդունությունունենով նրա վրա դրված պարտականությունները կատարելու։ Որինակ, միլիցիոների կողմից կողոպտչին կալանավորելու փորձի ժամանակի վերջինը միլիցիոներին հարվածներ են հասցնում։ Նախարար ունենալով խոչընդունության համարական կալանավորմանը։ Իսկ յեթե իշխանության ներկայացուցչի վերաբերմամբ բռնությունը չեր հետապնդում խոչընդունության համարական նրան կատարելու իր պաշտոնականությունները, այլ առաջացել եր ուրիշ զրդապատճառներով, որինակ՝ վրիժառության, շահագիտական և այլ, ապա այլպիսի բանությունը Եւխանության ներկայացուցչի վերաբերմամբ չի կարող դիմունել վորպես դիմագրություն իշխանությանը։ Որինակ, քրեական հետախուզություն բերված գողը հարվածում է քրեական հետախուզության գործակալին վրեժ առնելու նպատակով իրեն հետախուզություն բերելու համար։ Այսեղ բանությունը չի հանդիսանում իշխանության ներկայացուցչին իր պաշտոնականությունները կատարելու խանգարիչ մեջոց, այլ առաջացել է վրիժառությունից, ուստի և չի կարող դիմունել վորպես դիմագրություն իշխանությանը, այլ պետք ե հետեւցնի քրեական պատասխանառվություն։ ՌԱՖՍՀ Ք. Որ. ուրիշ հոդվածներով։

Չեն կարող նույնական վորպես իշխանությանը դիմագրե-

¹⁾ Հայկական ԽՍՀ Ք. Որ. 97 հոդ. I մ.։

լու ծանր տեսակ դիմովել մի անձնավորության գործոցությունները, վորը, լինելով հարբած վիճակում ձերբակալված, մելլոցիա բերելու ժամանակ հրում և մելլոցիոններին, դուրս պրծնելով վերջինի ձեռքերից, չցանկանալով յենթարկել ձերբակարձան :

Իշխանությանը դիմագրելը, միացած բռնության հետ, անհրաժեշտ է տարբերել բանդիստիզմից (ԱԽՖՍՀ Քր. Որ. 593՝ Հոդված)՝, ինչպես նաև տերորիստական ակտեց (ԱԽՖՍՀ Քր. Որ. 588 Հոդ.)։ Այն գեղաքերությ, յերբ իշխանության ներկայացուցչին դիմագրություն են ցույց տալիս զինված բանդան կամ այդ բանդայի առանձին անդամները (որինակ՝ զինված բանդիստներին կալանավորելու ժամանակ), իշխանությանն այդպիսի դիմագրությունը պետք է դիմով վրաբես բանդիստիզմ, բայց ԱԽՖՍՀ Քր. Որ. 593 Հոդվածի:

Յեթև իշխանության ներկայացուցչի նկատմամբ դիմագրությունը բռնությամբ և ցույց արված հակահեղափոխական նպատակներով, ասպա իշխանության այդպիսի դիմագրությունը պետք է դիտվի վորպես հակահեղափոխական հանցագործություն:

Իշխանությանը դիմագրելը, զուգուցված իշխանության
ներկայացուցչի նկատմամբ դորձագրված բռնության հետ,
պատժվում ե ազատազրկմամբ մինչև 10 տարի ժամանա-
կով։

3. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹԻՉՆԵՐԻՆ ԲՈՆԱԴԱՏԵԼԸ

Իշխանությանը գիմագրելու հետ մոտիկ չվկայում և նաև վարչակարգի գեմ ուղղված մյուս հանցագործությունը, վորը նախառանում է ՌԽՖՍՀ Քր. Որ. նույն այդ 73-րդ հոդվածով՝ իշխանությանը բռնադատելը։ Այն հասարակական մեծ վտանգ է ներկայացնում, վորովհետեւ տվյալ դեպքում իշխանության ներկայացուցիչը բռնադատվում է բացահայտվեն ապրիինի գործողությունները կատարելու։ Որինակ՝ բռնադատել միլիոններին՝ իր ուղեկցած հանցագործին ազատելու։

2) Հայկական ԽՍՀ ՔԸ. ՈՒ. 74 հոդ.:

ԲնիթՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածը խոսում է իշխանության ներկայացուցիչներին ապօռինի գործողությունների կատարման բռնադատելու մասին։ Ուստի պաշտոնատար անձի բռնադատումը, վորը իշխանության ներկայացուցիչ չի հանդիսանում, չի կարող քրեական պատասխանատվության տեղիք տալ ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածի։ Անվիճելիք յէ, վոր յուրաքանչյուր պաշտոնատար անձի, թե կուպ և նոր իշխանության ներկայացուցիչ չի, ապօռինի գործողություններ կատարելու բռնադատելը վտանգ և ներկայացնամ։ Ուրինակ, հիմնարկության վարիչն հարկադրելը, վոր նա հիմնարկության անունից տա՞ր բացահայտորեն ապօռինի տեղեկանք։ Սակայն բռնադատման այլպիսի տեսակները պետք են քրեական պատասխանատվություն հարուցեն վոչ թե ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածով, այլ ՌԽՖՍՀ Քր. Որ. 73¹ հոդ. 2 մասով՝ պաշտոնատար անձի վերաբերմամբ բռնություն կատարելու համար։

Բանագատման տակ հարկ ե լմբունել բնի ներգործությունի անհատի վրա: Բնի այդ ներգործությունը կարող է լինել ինչպես ֆիզիկական, այնպես ել հոգեկան: Ֆիզիկական ներգործման որինակ կարող է լինել միլիցիայի աշխատակցին հարգածներ հասցնելը՝ նաղատակ ունենալով հարկադրել վերջինին՝ նրա կողմից ուղեկցվող կալանավորին ազատելու: Հոգեկան ներգործության որինակ կարող է լինել քրեական հետախուզություն աշխատակցին սպառնելու սպառնալիքը, յեթե վերջինը չի վոչնչացնի իրեղին ապացույցները:

Սակայն իշխանության ներկայացուցչին բանագատելը ժիայն այն ժամանակ կարող է դիտվել վորպես քրեականութեն-պատժելի հանցանք, յերբ տեղի ունենալ բանագատությունն իշխանության ներկայացուցչին՝ կատարելու, ինչպես աալած և ԽնջՄՀ Քր. Որ. 73-րդ հոդվածի մեջ, բացահայտորեն ապօրինի գործողությունները։ Ուստի իշխանության ներկայացուցչին որինական և հասարակական կարգի շահերի համար անհրաժեշտ գործողություններ կատարելուն բանագատելը չե կարող դիտվել վորպես հանցագոր

²⁾ Ζωγλωλων ΛΟΖ ΡΕ· ΟΕ· 97ω Σητ· :

ծություն։ Յեվ դա լիովին հասկանալի յէ, վորովհետեւ
իշխանության բռնադասության՝ վորակես հանցագործության՝ վտանգը կայանում ե իշխանության որդանների նորմալ և ճիշտ գործունելիությանը վնաս պատճառելու մեջ։ Իսկ այն դեպքերում, յերբ իշխանության ներկայացուցչին հարկադրում են կատարելու որինական և անհրաժեշտ գործողություններ, հետեւաքար և հասարակականորեն-ողափակեած գործողություններ, իշխանության որդաններին վնաս պատճառելու մասին խոսելու հիմք չկա։

Միայն առանձին դեպքերում իշխանության այլպիսի հարկադրանքի ժամանակ, նայած բռնադասման ձևին, կարող ե ինքնիրավության կամ անհատի վերաբերմամբ բռնություն գործադրելու հարց ծառանալ։

ԱԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածի և միութենական մյուս հանրապետությունների Քր. Որ. համազատասխան հոգվածների ցուցումները՝ իշխանության ներկայացուցչին՝ բացահայտորեն ապօրինի գործողությունների կատարման բռնադատելու մասին՝ հարկ և հատկանալ ինչպես իշխանության ներկայացուցչին՝ բացահայտորեն ապօրինի գործողությունների կատարման բռնադատելու մասին՝ հարկ և հատկանալ ինչպես իշխանության ներկայացուցչին՝ բացահայտորեն ապօրինի գործողությունների կատարման իմաստով, այնպես ել իշխանության ներկայացուցչին՝ բացահայտորեն ապօրինի անօրծության հարկադրման իմաստով։ Որինակ, յերբ քրեական հետախուզության գործակալին ուժով բռնադատում են հրաժարմել բանդիտին կատարելու բռնելուց, այլպիսի բռնադատություն կատարելու համար քրեական պատասխանատվությունը պետք ե վրա հասնի ըստ նույն այդ ԱԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածի։

Քննարկվող հանցագործությունն առկա կլինի իշխանության ներկայացուցչին՝ բացահայտորեն ապօրինի գործողություններ կատարելու հարկադրման միայն մի փաստի հաստատման դեպքում։ Այն հարցը, թե իշխանության ներկայացուցիչը կատարել ե արդյոք (հարկադրման հետևանքով) ապօրինի այս կամ այն գործողությունը, թե գեռ չի կատարել, կարող ե նշանակություն ունենալ քննարկվող հանցագործության համար պատիժը վորոչելու ժամանակ միայն։

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 97 հոդ։

Քննարկվող հանցագործության համար քրեական պատասխանառվությունը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, յերբ իշխանության ներկայացուցչի բռնադատություն կատարողը գիտակցի, վոր ինքը բռնություն ե կատարում իշխանության ներկայացուցչի վրա՝ նպատակ ունենալով հարկադրելու վերջինին, վոր բացահայտորեն ապօրինի գործողություններ կատարի։

Պաշտոնատար անձի կողմից իրեն յենթարկվողին՝ բացահայտողն ապօրինի գործողություններ կատարելու հարկադրման դեպքում, յեթե այդ հարկադրումը կատարվել է պաշտոնատար անձի կողմից ողտադրությունով իր պաշտոնինեական դիրքը, քրեական պատասխանատվությունը հանցավորի համար վրա յէ համառմ պաշտոնինեական հանցագործության՝ իշխանությունն ի չարք գործադրելու կամ թէ իշխանադանցության համար (ԱԽՖՍՀ Քր. Որ. 109-րդ և 110-րդ հոդ. հոդ.)¹⁾։

Իշխանության ներկայացուցչի՝ բացահայտորեն ապօրինի գործողությունների կատարման բռնադատությունը պատժվում է նույն այն ձևով, ինչպես և իշխանության դիմադրելու։

4. ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԵՐԻՆ ՅԵՎ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱԾՈՂՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱԼԸ

Իշխանության որդանների ուղիղ և նորմալ գործունելության խանդարումը կարող է վրա հասնել վոչ միայն իշխանությանը չենթարկելուց, գիմադրելուց կամ հարկադրելուց, այլ նաև իշխանության ներկայացուցչին ապանալուց։ Բայց եյության, յեթե վորեւ մի անձ սպանությամբ սպառնա միլիցիայի աշխատակցին, նպատակ ունենալով հարկադրել նրան, վոր հրաժարվի պաշտոնեական այս կամ այն գործողությունները կատարելուց, ապա այլպիսի սպառնալիքն անկատկած կարող է բացահայտաբար անդրադառնալ իշխանության ներկայացուցչի պաշտոնեական գործունելության վրա։ Ահա թէ ինչու քրեական որենքը նախատեսում է հատուկ հանցագործություն՝ պաշտոնատար անձի

2) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 135—136 հոդվածները։

կամ հասարակական աշխատառղների վերաբերմամբ սպառնալը (ԱԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մաս. և միութենական մյուս Հանրապետությունների Քր. Որ. Համագաղատափախան հոդ-քածները) ։¹⁾

Յեթե վերևում քննարկված հանցագործությունների, այսինքն իշխանությանը չենթարկվելու, իշխանությանը դիմադրելու և իշխանությանը բանագատելու ժամանակ խոսքը վերաբերում էր միայն իշխանության որդանների նորմալ և ուղիղ գործունեյության խանդարմանը, ապա ԱԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մասը նկատի ունի վոտնձգություն վոչ միայն իշխանության որդանների, այլ և պետական յուրաքանչյուր հիմնարկի և ձեռնարկության ճիշտ և նորմալ գործունեյության դեմ։ Այդպիսի յեղանակացություն հարկ է անել 731 հոդ. I մասի բուն տեքստից, վորտեղ խոսքում և պաշտոնատար ամեն մի անձի նկատմամբ սպառնալիքի մասին, և վոչ թե միայն իշխանության ներկայացուցիչ։ Դեռ այելին, 731 հոդվածի մեջ խոսքում և նույնական հասարակական աշխատառղներին սպառնալու մասին, այսինքն նկատի ունի՝ արդպիսի սպառնալիքի հետեանքով Հասարակական կազմակերպությունների ճիշտ և նպատակարմար գործունեյության խանդարումները։

Այդ հասկանալի յէ, վորովհետեւ պաշտոնատար անձերին և հասարակական աշխատառղներին սպառնալու հետեանք կարող է լինել խորհրդավորին պետական ապարատի և հաստրակական կազմակերպությունների այս կամ այն ճյուղի կանոնավոր գործունեյության խանդարումները։

Պաշտոնատար անձնավորություն ասելով, վորոնց սպառնալու մասին խոսքում և ԱԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մասի մեջ, հարկ է հասկանալ այն անձնավորություններին, վորոնք նախատեսված են ԱԽՖՍՀ Քր. Որ. 109 հոդվածի ծառթության մեջ (այդ ծառթության մեջ արվում ե պաշտոնատար անձնավորությունների վորոշումը)։

Հասարակական աշխատառղների թվին, վորոնց վերաբերմբ կարող է սպառնալիք կատարվել, հարկավոր և գասել բոլոր անձնավորություններին, վորոնք տանը կամ այն գործունեյությունների վորոշումը։

սարակական այս կամ այն աշխատանքները։ Ստալինյան Սահմանադրության 126-րդ հոդվածի համաձայն ԽՍՀՄ մեջ հասարակական կազմակերպությունները հանդիսանում են պրոֆեսիոնալ միությունները, կոոպերատիվ միավորումները, յերիտասարդության կազմակերպությունները, սպորտային և ուստապահական կազմակերպությունները, տեխնիկական և դիտական լրակերպությունները և Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը, վորու աշխատավորների սուածավոր ջոկատն և սոցիալիստական կարգն ամրապնդելու և զարգացնելու համար նրանց մզած պայքարում և աշխատավորների բոլոր ինչպիս հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների գեղարվարող կորպորն և ներկայացնում։ Այսպիսով ամեն մի անձ, վորն ակտիվ աշխատում և թվաշրկած հասարակական կազմակերպություններից մեկի մեջ, պետք և համարվի հասարակական աշխատող։

Սուանալիքը, վորի մասին խոսքում և ԱԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մասի մեջ, հանդիսանում է անձի վրա հոգեկան բռնության տեսակներից մեկը, վորը կիրառված և նպատակ ունենալով անձնավորությանը հարկադրել կատարելու կամ չկատարելու վարչակի գործողություններ։

Սակայն իշխանության ներկայացնուցի, պաշտոնատար անձի կամ հասարակական գործչի նկատմամբ կիրառվածներ մի սպառնալիք չե կարող պատճելի լինել։ Ապանալիքը պատճելի կարող է լինել միայն այն ժամանակի, յերբ այն հակաբավական է, այսինքն այնպիսին, վորին քաղաքացիներին իրավունք չունեն դիմելու։ Ռւասի, որինակ, սրաշտոնատար անձին կամ հասարակական աշխատառղներին այն կամ այն գործողությունը կատարելու կամ չկատարելու գեղարվում նրա վրա բողոք տալով սովորական ոգատժելի լինել չե կարող։ Պաշտոնատար անձին սպառնելու սպառնալիքը, յեթե նա չե կատարի այս կամ այն գործողությունը իշահ սպառնացողի, անսպարման պետք և սրատժելի լինի, վորովհետեւ արդպիսի սպառնալիքը հակառարինական, հակարագավական և հանդիսանում։ Բացի այդ այն սպառնալիքը, վորի մասին խոսքում և ԱԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մասում, պետք և լինի իսկական սպառնալիք, այսինքն

¹⁾ Հայկական ԽՍՀ Քր. Որ. 97ա հոդ.։

այնպիսին, վոր ընդունակ լիներ այնքան ուժեղ ներգործություն անելու պաշտոնատար անձի կամ հասարակական աշխատողի վրա, վոր այդ հարկադրեր նրանց կատարելու կամ չկատարելու վորոշակի զործողություններ: Այդպիսի խնկական սպառնալիքներ ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մասը և միութենական մյուս հանրապետությունների Քր. Որ. Համապատասխան հոդվածները¹ համարում են 1) սպանության սպանալիքը, 2) զույգի փոչչացման սպանալիքը և 3) բռնուքյուն կատարելու սպանալիքը (ժարմնարկան վնասվածքներ, հարկածներ, ծեծ և այլն հասցնել):

Պաշտոնատար անձի կամ հասարակական աշխատողի վերաբերմամբ նկարագրած սպառնալիքները կարող են արտահայտվել ինչպես բռնալոր, այնպես ել գրավոր ձեռվ: Սպառնալիքը պաշտոնատար անձնավորությանը կարող է փոխանցվել ինչպես իրեն՝ սպառնացողի կողմից անմիջականորեն, այնպես ել յերրորդ անձնավորությանների միջոցով:

Սպառնալիքը՝ պաշտոնատար անձների և հասարակական դործիչների նկատմամբ հանդիսանում է քրեականորեն սպատժելի արարք միայն այն գեալքում, յերբ այդ սպառնալիքը կիրառվում է պաշտօնատար անձնավորությանների և հասարակական աշխատողների պաշտօնեական կամ հասարակական գործունեյությունը ի շահ սպառնացողի ընդհանուրությունը կամ փոփոխելու նպատակով:

Սպառնալիքի վտանգավորությունը կայանում է հենց նրանում, վոր այն կարող է կազմակուծել կամ խախտել պաշտոնատար անձնավորությանների կամ հասարակական աշխատողների գործունեյությունը, իսկ դրանով ել լուրջ միասն հացնել պետական սպարատի և հասարակական կաղաքական գործությունների աշխատանքին: Այսուղ, վորտեղ սպառնալիքը պաշտոնատար անձի կամ հասարակական աշխատողի նկատմամբ կատարված չե պաշտօնեական կամ հասարակական գործունեյությունն ընդհանությունը կամ փոփոխելու հարկադրանքի հետ, այնտեղ չկա վեասի հասուցում պետական ամրաբառի և հասարակական կաղմակերպությունների գործունեյությանը: Որինակ՝ պաշտոնատար անձնավորու-

¹⁾ Հայկական ԽՍՀ Քր. Որ. 97ա հոդ.:

Քյանը սպանելու սպառնալիքը՝ նպատակ ունենալով հարկադրել վերջինին սպառնացողին հանձնել ամռամբ պաշտոնատար անձնավորությանը սպատկանած գրամքը, պետք է վորակի վոչ թե ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մասով, այլ ՌԽՖՍՀ Քր. Որ. 174 հոդ. 1 վորպես հարստահարություն կամ թե ՌԽՖՍՀ Քր. Որ. 165 հոդ. 2 վորպես կողոպուտ:

Պաշտոնատար կամ հասարակական գործունեյությունն ընդհանություն կամ փոփոխելու նպատակով պաշտոնատար անձնավորության կամ հասարակական աշխատողի վերաբերմաբ կիրառած սպառնալիքը համար քրեական պատասխանատվությունը պետք է վրան հասնի անհետ այն բանից, թե սպառնալիքը հետեանքով ընդհանություն կամ փոփոխել և սպատոնատար անձնավորության կամ հասարակական գործը գործունեյությունը թե վոչ:

Քննարկող հանցագործությունն առկա կլինի հենց սպառնալիքը դեպքում, իսկ նրա հետեանքները կարող են նշանակություն ունենալ պատժի չափը վորոշելու ժամանակ միայն:

Այն գեալքերում, յերբ սպառնալիքն ուղղված եր կոլտնեսականների կամ կոլտնեսության պաշտոնատար անձերի հասցեյին և հանդիսացել եր կոլտնտեսությունից կոլտնեսականների գուրս գալու հարկադրանքի միջոց, կոլտընտեսությունը քայլայելու միջոց—քրեական պատասխանատվության պետք է կանչել 1932 թ. ոգոստոսի 7-ի որենքով, վորտեղ III բաժինը հատկապես քննարկում է կոլտնտեսականների նկատմամբ այդ տեսակի սպառնալիք:

Նկատի ունենալով այն, վոր սպառնալիքը՝ վորպես հոգեկան բոնության տեսակներից մեկը, կարող է տեղի ունենալ (տե՛ս վերևում) նաև իշխանությանը դիմադրելու ժամանակ, անհրաժեշտ է դատական պրակտիկայում տարրերել սպառնալիքը վորպես հանցագործություն, վոր նախատեսված է ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. I մասում, և սպառնալիքը վորպես իշխանությանը դիմադրելու հատկանիշներից մեկը (ՌԽՖՍՀ Քր. Որ. 73 հոդ. I մաս):

Այդ տարրերությունը կայանում է հետեւյալում: Իշխա-

¹⁾ Հայկական ԽՍՀ Քր. Որ. 205 հոդ.:

²⁾ Եռոյն աեղում, 196 հոդ.:

նությանը դիմադրելու ժամանակ սպառնալիքը տևզի ունի իշխանության ներկայացուցչի կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելու մոմենտին և միջոց ե ծառայում խոչընդունակությունները համարմանը, այսինքն այդ գեպքում սպառնալիքը իշխանությանը դիմադրելու ձեերից մեկն է: Իսկ ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. 1 մասի իմաստով սպառնալիքի գեպքում չի պահանջվում, վորպեսզի սպառնալիքի մոմենտին լինեն վորոշակի փոխհարաբերություններ պաշտոնատար անձնավորության և սպառնացողի միջև: ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. 1 մասով նախատեսված սպառնալիքը համոլիսանում և միայն միջոց հետագայում կանխելու կամ փոփոխելու պաշտոնատար անձնավորության պաշտոնեական այս կամ այն գործունեյությունը:

Դրանից բացի, իշխանությանը դիմադրելու և ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. 1 մասով նախատեսված սպառնալիքի միջև տարեբությունն այն և, վոր իշխանությանը դիմադրելու ժամանակ սպառնալիքն արտահայտված է իշխանության ներկայացուցչի նկատմամբ, իսկ ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. 1 մասի իմաստով սպառնալիքի ժամանակ սպառնալիքը կարող է ուղղված լինել պաշտոնատար յուրաքանչյուր անձնավորության նկատմամբ, և վոչ թե միայն իշխանության ներկայացուցչի, այլ նույնիսկ հասարակական աշխատովի վերաբերմամբ:

Քննարկված հանցագործության համար քրեական պատասխանավորությունը կարող է տեղի ունենալ, յերբ սպառնացողը զիտակցում էր, վոր իր սպառնալիքը ուղղված է պաշտոնատար անձի կամ հասարակական աշխատովի դեմ, և ցանկանում էր սպառնալիքի միջոցով ընդհատել կամ փոփոխել այդ անձնավորությունների պաշտոնեական կամ հասարակական գործունեյությունը:

Քննարկված հանցագործության ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. պատժվում է հարկադիր աշխատանքներով մինչև 6 ամիս ժամկետով, կամ առուղմաքով մինչև 300 ռուբլի, կամ վտարումով տվյալ վայրի սահմաններից և պարտադիր կերպով բնակեցնելով ուրիշ վայրերում կամ առանց դրան մինչև 3 տարի ժամկետով:

5. ԲԲՆՌԽԹՅՈՒՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԵՐԻ ՅԵՎ ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՐՔ

Իշխանությանը դիմադրելուն և հարկադրելուն շատ մուտքած է նաև րոնությունը պաշտոնատար անձնավորությունների և ասարակական աշխատովների նկատմամբ, վոր նախատեսված է ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. 2 մասով:

Ցեմենտ իշխանությանը դիմադրելու ժամանակ տնօմիջականորեն խախատվում է իշխանություն որդանների ճիշտ և նորմալ գործունեյությունը, այս պաշտոնատար անձնավորությունների և հասարակական աշխատովների վերաբերմամբ բնություն կատարելու հետեանքով կարող է լուրջ վնաս պատճառվել պաշտոնատար անձնավորությունների և հասարակական աշխատովների պաշտոնեական կամ հասարակական զարծունեյությանը: Որինակ, հասարակական աշխատովի նկատմամբ բնություն գործադրելը, վորը ձեռնարկության մեջ ակտիվ պայքար է տանում զործարքումների դեմ:

ՌԽՖՍՀ Քր. Որ. 731 հոդ. 2-րդ մասում խոսվում է հասարակական ակտիվիտանների նկատմամբ բննի գործողություններ կատարելու մասին, արտադրության հարգածացների, ինչպես նաև կոլտնտեսությանների նկատմամբ բնություն գործադրելու մասին:

Հասարակական-ակտիվիտաններ առելով հարկ և հասկանալ այն անձնավորություններին, վորոնք ակտիվ աշխատանք են տանում հասարակական այս կամ այն կազմակերպության մեջ (կուսակցական և կոմյերիտական աշխատովներ, պրոֆմիութենական աշխատովներ և այլն):

Ստախանության շարժման հզր գարգացումը, վորով ներկայումս ԽՍՀՄ մեջ ընդդրկված են միլիոնավոր աշխատավորներ, ջախջախված զասակարդացին թշնամիների մնացողների, խուլիգանական և հակահասարական այլ ելեմնատների կողմից գեղի այդ շարժումը դիմադրություն առաջ բերեց: Այդ դիմադրությունն ընդունեց ամենասարքեր ձեւեր և, մասնավորապես, արտահայտություն դրավ ստախանովականների նկատմամբ բնություններ սարքելու ձեւերի մեջ: Ստախանովականների նկատմամբ վոտնագության

առանձնարկի վտանգավորությունը հաշվի առնելով՝ ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանի Նախագահությունը 1935 թ. նոյեմբերի 28-ին հատկապես մատնանշեց «սատարանովականների դեմ ուղղված հանցավոր վոտնձությունների գործերի վերաբերմամբ խիստ ռեսլիքիա ապահովելու» անհրաժեշտությունը, «այդ հանցագործությունները վորակելով, նայած դործի կոնկրետ հանդամանքներին, կամ 731 հոդ. 2 մասով, կամ ել ՌԽՖՍՀ Ք. Որ. 58¹⁰ և 58⁸ հոդվածներով։

Անձնավորությունների յերրորդ խումբը, վորոնց վերաբերմամբ կարող է բանություն գործադրվել, հանդիսանում են կոլտնտեսականները: ՌԽՖՍՀ Գերագույն Դատարանի նախագահությունն իր 1936 թ. փետրվարի 13—14-ի վորոշման մեջ առաջարկեց այդ հանցանքները վորակել 731 հոդ. 2 մասով կամ, գործի հանդամանքներից յենելով, ՌԽՖՍՀ Ք. Որ. 58⁸ և 58¹⁰ հոդվածներով «կոլտնտեսուհի-կանանց նրանց արտադրական և հասարակական գործունեյության դեմ կամ նրանց դերը կոլտնտեսության մեջ նվազեցնելուն ուղղված ծաղր ու ծանակը»։

Վոչ ՌԽՖՍՀ Ք. Որ. 73¹ հոդ. 2 մասի մեջ, վոչ ել միութենական մյուս հանրապետությունների Ք. Որ. համագուստամիան հոդվածների մեջ ուղղակիրորն չի խոսվում պաշտամատար անձնավորությունների վերաբերմամբ բնաւրյուն գործադրելու մասին: Մակայն անպայման պաշտոնատար անձնավորությունների նկատմամբ բնաւրյուն գործադրելու մասին: Մակայն անպայման պաշտոնատար անձնավորությունների նկատմամբ բնաւրյուն գործադրելու մասին: Այդպիսի յեղակացություն անհրաժեշտ է կատարել քննարկվող հանցագործությունը միքիչ առաջ նկարագրված հանցագործության՝ սպառնալիքի հետ սուսպելուցց (ՌԽՖՍՀ Ք. Որ. 73¹ հոդ. 1 մաս): Յեթե խորհրդացին քրեական որենքը հանրայնորեն-վտանգավոր և պատժելիք յէ համարում սպառնալիքը պաշտոնատար անձնավորությունների նկատմամբ, առա առավել ևս վտանգավոր և հանդիսանում բնաւրյունը պաշտոնատար անձնավորությունների վերաբերմամբ: Ճիշտ և, առանձին դեպքերում պաշտոնատար անձնավորությունների նկատմամբ բնաւրյունի դոր-

ծովություններ կատարելն ընդգրկում և իշխանությանը դիմագրելու կամ հարկադրելու հասկացողություն: Այդ՝ Իշխանության ներկայացուցչի վերաբերմամբ բնաւրյուն կատարելու դեպքերն են նրան գլումագրելու նպատակով կամ նրան՝ ապղորինի դործողություններ կատարելու հարկադրելու նպատակով: Մակայն բնաւրյունը կարող է ցույց տրվել վոչ միայն իշխանության ներկայացուցչին, այլ նաև ամեն մի պաշտոնատար անձնավորության՝ կարված նրա պաշտոնական գործունեյության հետ կապված: Այդ դեպքերը պետք է վորակվեն ՌԽՖՍՀ Ք. Որ. 73¹ հոդ. 2 մասով։

Քննարկող հանցագործությունն առկա կինի այն ժամանակ, յերբ հասարակական ակտովի խստների, սուսպանովականների, կոլտնտեսականների և պաշտոնատար անձնավորությունների վերաբերմամբ բնաւրյունը դործողությունները կատարվել են նրանց հասարակական կամ արտադրական գործունեյության հետ կապված: Թվարկած անձնավորությունների վերաբերմամբ բնաւրյունի դործողությունները կարող են միջոց հանդիսանալ հասարակական աշխատազներին կամ պաշտոնատար անձնավորություններին հարկադրելու, վորդպարեցնեն իրենց հասարակական, արտադրական կամ պաշտոնական գործունեյությունը, կամ ել միջոց՝ այդ դործունեյությունը լայցաւական ուղղությամբ փոփոխելու, կամ ել, վերջապես, վրիժառության միջոց հասարակական ակտովի խստների նրանց հարկածայցին, արտադրական կամ հասարակական աշխատազների համար: Արինակ, լողի՝ զործալիքը վրիժառության նպատակով հարվածներ և հասցընում ստախանությականին նրա հարվածային, որինակելի աշխատանքի համար:

Իսկ հասարակական աշխատազների և պաշտոնատար անձնավորությունների վերաբերմամբ՝ նրանց հասարակական կամ պաշտոնական դործունեյության հետ չկապված բնաւրյունի դործողություններ կատարելու դեպքում, որինակ խանդի առիթներով կամ անձնական հողի վրա կովելու և այլն դեպքերում այդ դործողությունները չեն կարող վորակվել 73¹ հոդ. 2 մասով: Այդպիսի դեպքերում չկա վորություններ հասարակական կազմակերպությունների և

¹⁾ Հայկական ԽՍՀ Ք. Որ. 97ա հոդ.:

պետական ասլարատի աշխատանքի վրա և այն պետք է դիմումի վրա պետք անձի գեմ ուղղված հանցագործություն:

Այդ տեսակետից միանգամայն ճիշտ կերպով ՌԽՖՍՀ Դիմումույն Դատարանի Քրեական-վճռաբեկ կուլտիւմ (1936 թ.) վերագորակեց մեղադրյալ Գ. գործողությունները 73¹ հոդ. 2-րդ մասից ՌԽՖՍՀ Քր. Որ. 143 հոդ. 2 մասով, մատնանշելով, վոր ստախանովական Տիխոնովին ծեծելը Գ. կողմէց կատարվել եւ վոչ թե Տիխոնովին ստախանովական գործունեցության հետ կարլած, այլ անձնական վրիժառության դրդապատճառներով:

Հարել եւ նեկասով ունենալ, վոր 73¹ հոդ. 2-րդ մասի մեջ խոսքը վերաբերում եւ միայն հարվածներ հասցնելուն կամ նման այլ բանի գործողություններ կատարելուն, այնպես վոր վոչ սպանությունը, վոչ եւ մարմնական ծանր վնասվածքներն այստեղ չեն համընկնում հասարակական աշխատողներին կամ պաշտոնատար անձնավորություններին մարմնական ծանր վնասվածքներ հասցնելու ժամանակ և այդ անձնավորությունների սպանությունը կատարելու ժամանակ՝ կազմած նրանց հասարակական կամ պաշտոնական գործունեցության հետ, քրեական պատասխանավորությունը պետք եւ վրա համեմ ՌԽՖՍՀ Քր. Որ. 58³ հոդվածով: Աւստի և միանգամայն ուղիղ և Մուկուտի քաղաքացին գտարարանը (1939 թ.) գործալիք Կ.-ի հանցագործությունը ՌԽՖՍՀ Քր. Որ. 58³ հոդվածով վորակելու մեջ, հանցագործություն, վորն արտահայտվել և այն բանում, վոր գործալիք Կ. Հատիչը ձեռքին հարձակվել եւ ցեխի վարչիք վրա և նրան մարմնական ծանր վնասվածքներ և հացրել, բառվորում Կ.-ի հանցագործությունը հանգիստանում եր վրիժառության ակտ ցեխի վարչիք վերաբերմամբ նրա՝ գործալիքների և գործալքության գեմ մզած պայքարի համար:

Քրեական որենսգրքում ուղղակիորեն ցույց է տրվում, վոր բանությունները հասարակական աշխատողների և ակտիվիստների վերաբերմամբ կարող են վորակվել ՌԽՖՍՀ Քր. Որ. 73¹ հոդ. 2-րդ մասով միայն այն գեղքերում, «...յերբ այդ գործողություններն ըստ բնույթի, նրանց

կատարման իրադրության կամ հետեանքների չեն կարող դիմունքով վորպես տեսորիխատական ակտ»:

Այն գեղքերում, յերբ կոլտնտեսականների նկատմամբ բանի գործողությունները կատարվում են նպատակ ունենալով հարվածը կուտանսեսականներին դուրս գալ կոլտնտեսությունից, քրեական պատասխանատվությունը վրա յենանում վոչ թե ՌԽՖՍՀ Քր. Որ. 73¹ հոդ. 2-րդ մասով, այլ 1932 թ. ոգոստոսի 7-ի որենքով (որենքի III բաժին):

Քննարկվող հանցագործության համար քրեական պատասխանատվությունը կարող է տեղի ունենալ միայն այն պայմանով, յերբ բանի գործողությունները կատարողը զիտակցում եր, վոր ինքը հասարակական աշխատողի կամ պաշտոնատար անձնավորության վերաբերմամբ այդ գործողությունները կատարում եւ վոր այդ գործողությունները կատարում եւ այդ անձնավորությունների հասարակական կամ պաշտոնական գործունեյության հետ կապված:

Հասարակական աշխատողների վերաբերմամբ բանություն կատարելը պատճենում և աղատազրկմամբ մինչև 5 տարի ժամանակով:

6. ԻՆՍԱՆԱԼԻԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹԻՆ

ՎԻՐԱՎԱՐՈՒՄ ՀԱՍՑՆԵԼԸ

Իշխանության որգանների գեմ ուղղված հանցագործություններից մեկը հանդիսանում է իշխանության ներկայացուցչին վիրավորելը, վոր նախատեսված և ՌԽՖՍՀ Քր. Որ. 76 հոդվածով և միութենական մյուս հանրապետությունների Քր. Որ. Համապատասխան հոգվածներով: Տվյալ հանցագործության վտանգավորությունը վորոշվում է յերկու հիմնական մոմենտներով: Նախ, իշխանության ներկայացուցչին վիրավորելու ժամանակ տեղի յի ունենում անմիջական վլունձգություն իշխանության որգանների հեղինակության և արժանապատվության վրա, վորովհետեւ իշխանության ներկայացուցչին վիրավորելու հետևանքով քաղաքացիների աշխատ ընկնում և իշխանության որգանների հարգանքը և վտանգությունը: Որինակ, զատավորին հաս-

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 101 հոդ.:

ցրած վիրավորանքի ժամանակ ընկնում և դատական որդանների հեղինակությունն ու արժանապատվությունը: Յերկրորդ, իշխանության ներկայացուցչին վիրավորելը կարող է իր հետեւյց բղխեցնել իշխանության որդանների ճիշտ գործունելության խանգարում, խոչընդունակության սպառնական պարտականությունների հարթ ընթանալուն: Որինակ, պոստում կանոնած միլիցիոներին հասցրած վիրավորանքներն անկասկած խանգարում են նրան հանդիսաւ և ուշադիր վիրաբերելու իր պաշտոնեական պարտականություններին:

Հաշվի առնելով իշխանության ներկայացուցիչներին հասցրած վիրավորանքի այդ հետեւանքները, խորհրդային քրեական որենքն առանձնացնուած և իշխանության վիրավորելն անհատի դեմ ուղղված ընդհանուր հանցագործություններից և մտցնուած և վարչական հարդի դեմ ուղղված հանցագործությունների զվարի մեջ:

ԱԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդ. մեջ առվում և իշխանության ներկայացուցիչներին վիրավորելու մասին, այսինքն՝ այնպիսի պաշտոնատար անձնավորությունների, վորոնք առանձին քաղաքացիների հետ ունեցած հարաբերությունների ընթացքում այս կամ այն չափով ներկայացնուած են իշխանության որդանները (միլիցիոներներ, դատավորներ, քննիչներ, դատախաղներ, խորհուրդների նախադաշներ, ունդամներ և այդ): Աւատի, որինակ, պետական վորոնք հիմնարկի հաշվապահներն կամ գանձապահներն վիրավորելը չի կարող դիտավել վորապես վիրավորանք իշխանությանը, վորովհետեւ վոչ հաշվապահը, վոչ ել գանձապահը իշխանության ներկայացուցիչներ չեն հանդիսանուած: Այդպիսի անձնավորություններին վիրավորելը պետք է վորապելի ՌԽՖՍՀ Քր. Որ. 159-րդ հոդվածով¹⁾, վորապես անձնական վիրավորանք, վոր նախատեսված և անձնավորության դեմ ուղղված հանցագործությունների զվարում:

Մի շարք միութենական հանրապետություններում, և, մասնավորապես ՌԽՖՍՀ մեջ, արդարադատություն դեկալիարով որդանները հրապարակել եյին դիրեկտիվներ, վորոնք

հնարավորություն եյին տալիս լայնորեն կիրառելու իշխանությանը վիրավորելու հոգվածը: Այսպես, միլիցիայի որդաններին աջակցություն ցույց տվող անձնավորությունների պահպանությունն ուժեղացնելու նպատակով ՌԽՖՍՀ մկն 1936 թ. դեկտեմբերի 8-ի վորոշման մեջ առաջարկեց՝ միլիցիայի որդաններին աջակցող քաղաքացիներին հրապարակային վիրավորանք հասցնելը վորապել վիրավորանք իշխանությանը:

Իշխանության ներկայացուցչին հասցրած վիրավորանքը պետք է վորապելի ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդվածով միայն այն գեղքերում, յերբ իշխանության ներկայացուցչին հասցրած վիրավորանքը կատարվել եր նրա կողմից իր պաշտօնեական պարտականությունները կատարելու ժամանակ, վորովհետեւ միայն այդ պայմանում իշխանության ներկայացուցչին հասցրած վիրավորանքը իշխանության որդանների հեղինակությունն ու արժանապատվությունը զցելու և իշխանության որդանների ճիշտ գործունեյությունը խախտելու սպառնալիք և պարունակում: Այսպես, որինակ, հաճախորդներին ընդունող դատախաղին հասցրած վիրավորանքն անպայման քաղաքացիների աշջում զցում և դատախաղության որդանների հեղինակությունն ու արժանապատվությունը և կարող է խախտել այդ որդանների խաղաղ ու ճիշտ աշխատանքը: Ուրիշ բան և, յերբ, որինակ, հենց նույն դատախաղին վիրավորանք է հասցվում այն մոմենտին, յերբ դատախաղն իր ընակարանում է գտնվում, տնային իրադրության մեջ և: Տվյալ դեպքում հասցրած վիրավորանքը չի կարող անդրադառնալ դատախաղի պաշտօնեական պարտականությունների կատարմանը, վորովհետեւնա գտնվում և տնային իրադրության մեջ, և վոչ թե իր պաշտօնեական պարտականությունները կատարելու պրացեսում:

Իշխանության ներկայացուցչին հասցրած վիրավորանքը, վորը չի գտնվում իր պաշտօնեական պարտականությունները կատարելու պրոցեսի մեջ, թեկուղ և, իհարկե, հանցագործություն և, բայց այդպիսի հանցագործությունը պետք է հետապնդվի վոչ թե ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ

¹⁾ Հայկական ԽՍՀ Քր. Որ. 185 հոդ.:

Հոգվածով, այլ ՌԽՖՍՀ Քր. Որ. 159-րդ հոդվածով, վորակեան մասնակոր անձնավորության հասցըած վիրավորանք:

Իշխանության ներկայացուցչին հասցըած վիրավորանքը կարող է ազդել իշխանության ներկայացուցչին իր պաշտոնական պարտականությունների հանդիսաւ և ճիշտ կատարման վրա միայն այն գեազիքնում, յերբ վիրավորանքը հասցիւմ է անմիջականորեն և անձամբ՝ իշխանության ներկայացուցչին այն մոմենտում, յերբ նաև իրականացնում էր իր պաշտոնական պարտականությունները: Աւատի իշխանության ներկայացուցչին հեռակայորեն հասցըած վիրավորանքը, թեկող և վերջինը վիրավորանք հասցնելու մոմենտին գտնվում էր իր պաշտոնական պարտականությունները կատարելու պրոցեսում, չի կարող վորակվել ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդվածով: Դրան համապատասխան ել ՌԽՖՍՀ Գերագույն դատարանը (1937 թ.) հանցակագույն քաղ. Խ. գործողություններում, վոր նախատեսված եր ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդվածով, գործողությունն, վորն արտահայտվել եր դատավորի հասցեյին վիրավորական արտահայտություն անելու մեջ այն մոմենտին, յերբ դատավորը գտնվում էր խորհրդակցության սենյակում, և առաջարկեց այդ վիրավորանքը վորակել ՌԽՖՍՀ Քր. Որ. 159-րդ հոդվածով:

Վիրավորանքը, վորի մասին խոսվում է ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդ. մեջ, իհարկե, հասկանալ վորակես նիմաստացուցիչ և վիրավորական վիրաբերմունք իշխանության ներկայացուցչին, այդ վիրաբերմունքը գցում է նրա հեղինակությունն ու արժանապատվությունը: Վիրավորանքը կարող է լինել բանավոր, այսինքն՝ կարող է արտահայտվել իշխանության ներկայացուցչի հասցեյին տարբեր տեսակի վիրավորական և անցենզուր արտահայտությունների մեջ: Իշխանության ներկայացուցչին վիրավորանքը կարող է հասցնել նաև այս կամ այն գործողությունները կատարելու միջոցով, վորոնք նվաստացնում են իշխանության ներկայացուցչին, որինակ, յերեսին թքել, գլխարկը դցել, յերեսին ապահովել և այլն: Վիրավորական խոսքերը և գործողությունները կարող են վիրաբերել ինչպես հենց իշխանության ներկայացուցչին (որինակ, իշխանության ներկա-

յացուցչին վիրավորական կոչումներ տալը), այնպես ել նրա պաշտոնեական գործունեցությանը (որինակ, իշխանության ներկայացուցչի աշխատանքի վիրավորական գնահատականը):

Վորքանով վոր իշխանության ներկայացուցչին հասցըարած վիրավորանքի ժամանակ ամենից վտանգավորը հանդիսանում է քաղաքացիների ազին իշխանության որդանների հեղինակությունն և արժանապատվությունը դցելը, այդ չափով ել ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդ. և միութենական մյուս համբարետությունների Քր. Որ. Համապատասխան հոդվածները խոսում են վոչ թե պարզապես իշխանության ներկայացուցչին վիրավորանք հասցնելու մասին, այլ իշխանության ներկայացուցչին հասպարամորեն վիրավորանք հասցնելու մասին: Իշխանության ներկայացուցչին վիրավորանք հասցնելը միայն այն գեազում կարող է դցել քաղաքացիների աչքին իշխանության որդանների հեղինակությունն ու արժանապատվությունը, յերբ այլ վիրավորանքը հասցվում է հրապարակորեն, այսինքն միքանի անձնավորությունների ներկայությամբ: Իշխանության ներկայացուցչի վիրավորանքը, վորը նրան հասցիած չե հրապարակորեն այլ քերես առ յերես, չի կարող քաղաքացիների մոտ դցել իշխանության որդանների հեղինակությունն ու արժանապատվությունը, ուստի և պետք է դիտվի վորովես մասնավոր անձնավորության հասցըած վիրավորանք:

Հարկավոր ե, սակայն, նկատի ունենալ, վոր վիրավորանքի հրապարակայնության առկա լինելու համար նշանակություն չունի այն, թե վիրավորանք հասցնելու ժամանակ վիրավորանք հասցնողից և վիրավորվողից բացի մեկ կամ միքանի անձնավորություն եր ներկա: Դեռ այլին, վիրավորանքի հրապարակայնության առկա լինելու համար ամենենին ել պարտադիր չե նաև յերբորդ անձնավորությունների ներկայությունը: Վիրավորանքը հրապարակային կլինի նաև այն ժամանակ, յերբ այն հասցվում է յերես առ յերես, բայց լսելի կամ տեսանելի յե յերբորդ անձնավորություններին:

Հրապարակային վիրավորանք հարկավոր ե ճանաչել նաև այնպիսի վիրավորանքը, վոր հասցիած և մաժուլի

միջոցով, վորովհետև այդպիսի վիրավորանքը հայտնի յեղանում քաղաքացիների լայն շրջանին:

Այն վիրավորանքը, վորն արտահայտված եւ գրավոր, այսինքն՝ իշխանության ներկայացուցչին հասցած և մասնավոր նամակի կամ պաշտոնական գիմումի միջոցով, կարող եւ վիրազրսիլ հրապարակային վիրավորանքի միայն այն սպառմանով, յերբ ուղարկված նամակը կամ գիմումը, նախքան իշխանության ներկայացուցչին հասնելը, անցնում եւ յերբորդ անձնափորությունների ձեռքով և նրանց հայտնի յեղանում:

Իշխանության ներկայացուցիչներին վիրավորանք հասցնելու համար քիչական պատասխանատվությունը կարող եւ անզի ունենալ միայն այն դեպքում, յերբ վիրավորանք հասցնողը գիտակցում եր, վոր ինքնի իր խոսքերով կամ գրքով յունեներավ նվաստացնում և իշխանության ներկայացուցչին, ինչպես նաև գիտակցում եր, վոր վիրավորանքը իշխանության ներկայացուցչին հասցված եւ վերջինի կողմից իր պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ և երապարակութեան: Այն դեպքերում, յերբ վիրավորանք հասցնողը չեր գիտակցում, վոր ինքը վիրավորանք և հասցնում իշխանության ներկայացուցչին, սխալմամբ վերջինին ընդունելով մասնալոր քաղաքացու փոխարեն, քրեական պատասխանատվությունը պետք եւ վրա հասնի մոչ թե իշխանությանը վիրավորելու համար, այլ մասնավոր մարզու վիրավորանք հասցնելու համար, այսինքն ՌԽՖՍՀ Քր. Որ. 159-րդ հոդվածով:

Հարկավոր եւ ինկատի ունենալ, վոր յեթե իշխանության ներկայացուցչին վիրավորանքը գալիս եւ այն պաշտօնատար անձնավորությունից, վորին վիրավորվողը ըստ ծառայության յենթակա յեւ (որինակ, միլիցիայի բաժանմունքի պետը վիրավորում եւ ըստ ծառայության իրեն յենթակա միլիցիոներին), ապա այդպիսի վիրավորանքը պետք եւ գիտի վորովեա պաշտոնական հանցագործություն՝ իշխանադանցություն:

Իշխանության ներկայացուցչին վիրավորանք հասցնելով պատմվում եւ ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. աղասազրկմամբ

կամ ուղղիչ աշխատանքներով մինչև 6 ամիս ժամանակով կամ տուղանքով մինչև 500 հուբլի:

7. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՑՆԵԼ

Իշխանության որգանների ուղիղ և նորմալ գործունելության գեմ ուղղված ել ամելի վտանգավոր վտանգություն, քան իշխանության վիրավորելը, հարկավոր և համարել ինքնակամ կերպով կոչում կամ պաշտոնատար անձնավորության իշխանությունն յուրացնելը, վոր նախատեսված եւ ՌԽՖՍՀ Քր. Որ. 77 հոդվածով և միութենական մյուս հանրապետությունների Քր. Որ. համապատասխան հոդվածներով¹:

Այդ հանցագործությունը կապված է իշխանության որգանների ճիշտ գործունելությունը խսիտելու հետ. այն անձնավորությունը, վորը իշխանության ներկայացուցչի չի հանդիսանում, այլ միայն ինքնակամ կերպով յուրացնում և իշխանության ներկայացուցչի կոչումը, կատարում և մի գործողություն, վորը մտնում և իշխանության որգանների պաշտոնակամ պարտականությունների շրջանակի մեջ: Որինակ, ինքնակամուրեն իրեն քննիչի կոչումը ունիականացնողը խուզարկություն և կատարում քաղաքացիների մոտ:

Դրանից բացի, ինքնակամուրեն իշխանության ներկայացուցչի կոչման յուրացումը կարող եւ ուղեկցվել նաև իշխանության որգանների վարկաբեկման հետ, վորովհետեւ կոչում յուրացնողը կարող եւ կատարել այնպիսի գործողություններ, վորոնք ընդունակ են քաղաքացիների աշխատ դցել իշխանության որգանների հեղինակությունն ու արժանապատվությունը: Որինակ, այն անձնավորությունը, վորը իրեն հանդես եւ բերում վորակես ծողովրդական դատավոր, հարբում և անկարգություններ և անում:

ՌԽՖՍՀ Քր. Որ. 77-րդ հոդվածի, ինչպես նաև միութենական մյուս հանրապետությունների Քր. Որ. համապատասխան հոդվածների մեջ խոսվում է կոչման կամ պաշ-

1) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 102 հոդ.:

տոնատար անձնավորության իշխանության յուրացման մասին: Ուստի քննարկվող հանգագործությունն առկա կլինի և այն ժամանակ, յերբ վորեւ անձնավորություն իրեն հանդես է բերում իշխանության ներկայացուցչի տեղը (որինակ, դատավորի, միլիցիոների, խորհրդի նախագահի և այլն), ինչպես նաև այն ժամանակ, յերբ անձնավորությունն իրեն ներկայացնում է վորեւ պաշտոնատար անձնավորության տեղը (որինակ, հիմնարկի վարիչ, տնտեսության վարչի, գլխավոր հաշվապահի և այլն): Յեզ դա լիովին հասկանալի յեւ, քանի վոր այն անձնավորությունը, վորն իրեն ներկայացնում է պաշտոնատար անձնավորության փոխարեն, կարող է իր գործողություններով զցել պետական այն հիմնարկության հարգանքն ու հեղինակությունը, վորի աշխատողի տեղը նա իրեն ներկայացնում է:

Ինքնակամորեն հասարակական վորեւ կազմակերպության ներկայացուցչի կոչումը յուրացնելը, վորը կասված և վտանգավոր գործողություններ պատճառելու կամ հասարակական կազմակերպություններին վարկարենելու հետ, նույնպես վոտնձղություն և պետական ապարատի դեմ: Ուստի, որինակ, ուսկըոմի քարտուղարի կոչումը յուրացնելը և ընդունի գործողությունների կատարումը, վորոնք կարող են վարկարենել ուսկըոմի քարտուղարի կոչումը, նույնպես պետք է հետեւնման քրեական պատասխանատվություն ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 77-րդ հոդվածի:

Դատական պրակտիկայում հաճախ ծառանում է ՌԽՖՍՀ Քր. Որ. 77-րդ հոդվածով այն անձնավորություններին քրեական պատասխանատվության յենթարկելու հնարավորության հարցը, վորոնք իրենց ձևացնում են այս կամ այն մասնագետ, որինակ մասնավոր պրակտիկա ունեցող բժշկի, դերասանի և այլնի և կատարում են այդ հիման վրա այս կամ այն գործողությունները՝ զրազվում են բժշկական պրակտիկայով, յերւյթ են ունենում ակումբների եստրադաներում և այլն: Այդպիսի դեպքերը, իհարկե, չեն կարող դիտել վորակս պաշտոնատար անձնավորության կոչման ու իշխանության յուրացում: Այստեղ չեա

վոչ իշխանության ներկայացուցչի կոչման յուրացում, վոչ եւ պաշտոնատար անձնավորության կոչման յուրացում, քանի վոր և մասնավոր պրակտիկայով զրազվող բժշկը և դերասանը պաշտոնատար անձնավորություններ չեն: Այս կամ այն մասնագետի կոչման յուրացման գեպքերում առկա կլինի խարդախություն (ՌԽՖՍՀ Քր. Որ. 169-րդ հոդ.)¹⁾, յեթե կեղծ մասնագետի գործողությունները ուղղված են խարելու միջոցով նյութական ոգուտներ կորպելուն (որինակ, իրեն ինժեների տեղը ներկայացնողը ստանում է ապուրինի կերպով բարձր աշխատավարձ, կամ իրեն դերասանի տեղը ներկայացնողը ստանում է մի աշխատավարձ, վորը սահմանված է խսկական դերասանների համար և այլն): Այն դեպքում, յերբ սովոր անձնավորությունն իրեն ներկայացնում է բժշկի տեղը և այդ հիման վրա զրազվում է բժշկական պրակտիկայով, քրեական պատասխանատվությունը վրա յեւ հասնում այն հանցագործության համար, վոր նախատեսված է ՌԽՖՍՀ Քր. Որ. 180-րդ հոդվածով, վորպես ապօւնինի կերպով բժշկությամբ զրազվող: Ընդորում հարկավոր է նկատի ունենալ, վոր այն դեպքերում, յերբ մասնագետի կոչումը յուրացնողն իրեն ներկայացնում է վորպես պաշտոնատար անձնավորություն և այդ հիման վրա պատճառում է հանրայնութենական պահպանությունը գործողություններ, քրեական պատասխանատվությունը պետք է վրա հասնի ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 77-րդ հոդվածի:

Հարկավոր է, վերջապես, նշել, վոր միութենական բոլոր հանրապետությունների քրեական որենսդրքերն հատկապես առանձնացնում են աշխատավորների խորհուրդների դեպուտատների և զբանշանակիրների կոչման յուրացումը, վորն արտահայտվում է ապօրինի կերպով դեպուտատական նշանը կամ ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների շքանշանները կրելու մեջ (ՌԽՖՍՀ Քր. Որ. 183-րդ հոդված):

Քննարկող հանցագործությունը կայանում է վոչ միայն լոկ իշխանության ներկայացուցչի կամ պաշտոնատար անձնավորության կոչումն ինքնակամ յուրացնելու մեջ:

¹⁾) Հայկական ԽՍՀ Քր. Որ. 200 հոդ.:

Հանցագործությունն առկա էլինի այն ժամանակ, յերբ ինքնակամուրեն իշխանության յուրացումը ուղեկցվել էր կամ խորեդային իշխանության վարկարեկմամբ կամ ել հանրայնորեն-վտանգավոր վորևէ գործողություն կատարելով: Յեզ գա լիովին հասկանալի յե, քանի վոր հենց միայն ինքնակամ կերպով իշխանության յուրացման փաստը դեռևս չի կարող խախտել իշխանության որդանների ճիշտ գործունեցությունը կամ թե գցել իշխանության որդանների հեղինակությունն ու արժանապատվությունը: Որինակ, ժողովրդական դատարանի վորևէ քարտուղար իր ծանոթների ըրջանում իրեն ներկայացնում և ժողովրդական դատավորի տեղը, բատվորում չի կատարում վորևէ գործողություն, վոր մանում եր ժողովրդական դատավորի պարուականությունների մեջ, և իր վարքով չի արատավորում ժողովրդական դատավորի կոչումն ու արժանապատվությունը: Բերած որինակը չի կարող գնահատմի վորպես հանցագործություն, վոր նախատեածած ե Քր. Որ. 77-րդ հոդվածով, քանի վոր ժողովրդական դատարանի այդ քարտուղարի գործողությունները չեն խախտում ժողովրդական դատարանի ուղեղ գործունեցունը և չեն արատավորում ժողովրդական դատարանի արժանապատվությունն ու հեղինակությունը: Իհարկե, կարծեցյալ դատավորի այլպիսի վարքը պետք ե առաջ ըերի բարոյական և հասարակական դատավարատություն, վորովհետեւ ամեն մի ինքնակոչություն և ինքնապարօքություն մեզ մոտ արժանանում և ամեն տեսակի պարսականքի, բայց այստեղ չկա քրեականորեն պատժելի արարք:

Ուրիշ բան ե, յերբ նույն այդ դեպքում ժողովրդական դատարանի քարտուղարը, վորն իրեն ժողովրդական դատավորի տեղն և ներկայացնում, բացահայտուեն և բոլորի ներկայությամբ հարրում, հայհոյում և և այլն: Այստեղ, անկասկած, արդեն, իշխանության կոչումը յուրացնելու համար պետք ե քրեական պատասխանատվություն. վրա համենի ըստ ՌիֆՍՀ Քր. Որ. 77-րդ հոդվածի, վորովհետեւ կոչում յուրացնողը, քաղաքացիների աչքին յերեան դարով իրեմ իշխանության ներկայացուցիչ, գցում և արատա-

րում և իշխանության որդանների հեղինակությունն ու արժանապատվությունը:

Իշխանության ներկայացուցչի գերում ինքնակուչի բոլոր գործողությունները չե, մոր հանցագործություն են հանդիսանում, այլ միայն ինքնակուչի կողմից կատարած հանրայնորեն-վտանգավոր գործողությունները պետք ե դիմում վորպես հանցագործություն: Որինակ, գողին հայտաբերելու և հայտաբերման տեղում իշխանության ներկայացուցչի բացակայության ժամանակամուլտությունը մեջ, իրեն ներկայացնում և վորպես քրեական հետախուզության գործակալ՝ գողին բռնելու նպատակով և, իրրե այլպիսին, գողին տանում և միջիցիայի բաժանմունք: Բերած որինակում չկա հանցագործություն, վորովհետական քաղաքացու գործողությունները, թեկուղ և ինքնակամ կերպով քրեական հետախուզության գործակալի անունն եր յուրացրել, սոցիալապես վտանգավոր չեն:

Իշխանության ներկայացուցչի կամ պաշտոնատար անձնամուրության կոչման յուրացումը կարող ե ուղեկցվել քրեականուրեն պատժելի ուրիշ արարքների կատարմամբ: Որինակ, ինքնակուչը, վորը յուրացրել և քննիչի կոչումը և այդ հիման վրա կատարում և խուզարկելություն, զավթում և խուզարկվողի դույքի մի մասը: Այդ դեպքում քրեական պատասխանատվությունը վրա յե հասնում հանցագործությունների հարակցությամբ: և ինքնակամ կերպով իշխանության ներկայացուցչի կոչումը յուրացնելու համար (ըստ ՌիֆՍՀ Քր. Որ. 77-րդ հոդվածի) և ուրիշի գույքը գողանալու համար (ըստ ՌիֆՍՀ Քր. Որ. 162-րդ հոդվածի):

Այն դեպքերում, յերբ իշխանությունը յուրացված և պաշտօնատար անձնամուրության կողմից, վորը դրա համար ողատագործում և իր պաշտոնեական դրությունը, քրեական պատասխանատվությունը պետք ե վրա հասնի վոչ թե իշխանությունը յուրացնելու (ՌիֆՍՀ Քր. Որ. 77-րդ հոդվածի), այլ պաշտօնեական հանցագործության, իշխանագանցության համար (ՌիֆՍՀ Քր. Որ. 110-րդ հոդվածի): Որինակ, միջիցիայի բաժանմունքի հերթապահն, ողատիւլով իր

պաշտոնեական գրությունից, իրեն ներկայացնում եւ վորպիս միլիցիայի բաժանմունքի պետ և կատարում եւ մի շարք գործողություններ, վորոնք մտնում են միայն միլիցիայի բաժանմունքի պետի պարտականությունների մեջ:

Իշխանությունը յուրացնելու համար քրեական պատասխանառվությունը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, յեթք անձնավորությունը գիտակցում է, վոր ինքը ինքնակամ կերպով իրեն է յուրացնում իշխանության ներկայացուցչի կամ պաշտօնատար անձնավորության կոչումը և վոր այդ հիման վրա կատարում է գործողություններ, վորոնք կարող են վարկաբեկնել խորհրդային պետական ապարատը կամ եւ խախտել նրա ուղիղ և նորմալ գործունեցությունը: Իսկ այն դեպքերում, յեթք անձնավորությունը, վորը յուրացը և իշխանության ներկայացուցչի կամ պաշտոնատար անձնավորության կոչումը, չեր գիտակցում, վոր ինքը կատարում է իշխանությունը վարկաբեկող կամ պետական ապարատին այլ վնաս պատճառող գործողություններ, առևտ չի քննարկվող հանցագործությունը:

Ինքնակամ կերպով կոչման կամ պաշտոնատար անձնավորության իշխանության յուրացումը՝ պատժվում և ըստ ԱԿՖՍՀ Ք. Ար. աղատարրկումով մինչև 2 տարի ժամանակով:

8. ԻնքնիրԱՎ.ԶՈՒԹՅՈՒՆ

Ինքնիրավչությունը (ԲԽՖՍՀ Ք. Ար. 90-րդ հոդ.)¹⁾ վորպես իշխանության որգանների դեմ ուղղված հանցագործություններից մեկը, շատ և մոտենում իշխանությունը յուրացնելուն:

Ինքնիրավչության ժամանակ առանձին մարդիկ կատարում են այնպիսի գործողություններ, վորոնք ըստ որենքի կարող են կատարել միայն իշխանության ներկայացուցիչները: Որինակ, քաղաքացին, վորն իր ձեռքին ունի դատական վճիռը՝ նրան սենյակ տալու մասին, ինքնակամ կերպով, մի կողմ թողնելով դատական կատարածություն, ձեռնա-

մուխ և վիճում սենյակի զբաղեցման՝ բացում է կողմեքը, դուրս է հանում այսուել գտնված իրերը, այսինքն կատարում է մի շարք գործողություններ, վորոնք կարող եք կատարել միայն դատական կատարածության համար առանձնաւոխ ընորոշ հանդիսանում է խորհրդացին որենքների անտեսումը, խորհրդացին իշխանության կողմից անցանալու մասին կատարածության համար անձնանուած անտեսումը, խորհրդացին իշխանության կողմից անձնաված իրավակարգի հետ հաշիվ տեսնելու անցանալությունը: Այս անձնավորությունը, վորը կատարում է ինքնիրավչություն, անմիջականութեան խախտում և Սատթենյան Մահմանադրության 130-րդ հոդ., վորը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացուց սպահանցում է կատարել որենքները և հարգել սոցիալիստական հանրակեցության կանոնները:

Ինքնիրավչության վանագավորությունն այն է, վոր այն խախտում է իշխանության որդանների որինավորը և նորմալ գործունեցությունը, վորովհետեւ ինքնիրավչական գործողություն կատարող վորեւել կերպ իրենով փոխարինում և որենքով սահմանված իշխանության ներկայացուցիչներին:

Ինքնիրավչության տակ հարկավոր է հասկանալ, ինչպես այդ մասին ուղղակի տովում և ՌԽՖՍՀ Ք. Ար. 90-րդ հոդվածի մեջ, ինքնակամ կերպով, անկախ իշխանության սահմանած կարգից, իր խսկական կամ յենթադրական իրավունքներն իրականացնելը:

Այսպիսով, ինքնիրավչության համար ամենից առաջ անհրաժեշտ է, վորպեսզի առկա լինի այս կամ այն քաղաքացու կողմից մի շարք իրավունքների իրականացումը, իրավունքների, վոր նա համարում է իրեն պատկանող: Ընդունին քննարկող հանցագործության համար քրեական պատասխանառվությունը վրա յի հասնում նաև այն դեպքերում, յերբ իրականացվում եր խսկական իրավունքը, ինչպես նաև այն դեպքերում, յերբ իրականացվում եր միտքն յենթադրական իրավունքը: Այսպես, որինակ, դատական վճռով սենյակ ստացող քաղաքացին չղիմելով իշխանության որդանների ուղարկությանը, ինքնական կերպով կատարում է այդ ուղարկում զանվոր անձնավորությունների արտաքումը: Թեև տվյալ դեպքում քաղաքացին իրականացնում է

1) Հայկական ԽՍՀ Ք. Ար. 115 հոդ.:

իսկապէս սենյակի՝ նրան պատկանող իրավունքը, այնուամենայնիվ այսուև առկա կլինի ինքնիրավշություն, քանի վոր քաղաքացին գործում է ինքնակամորեն, անտեսելով իշխանության որբանները:

Ճեզո նույնպես ել ինքնիրավշություն կլինի նաև մյուս դեպքում, յերբ քաղաքացին դատարկվող սենյակի նկատմամբ իրականում վոչ մի իրավունք չունենալով, այլ միայն սխալմամբ յենթադրելով, թե ինքը սենյակի նկատմամբ իրավունք ունի, ինքնակամ կերպով զբաղեցնում է սենյակը: Տվյալ դեպքում իրականացվում է վոչ թե իրական, այլ միայն յենթադրվող իրավունքը: Ինքնիրավշության առկայության համար նշանակություն չունի, թե իրականացվում եր իսկական իրավունքը թե միայն յենթադրվողը:

Դատարկան պրակտիկայում հաճախ հարց ե առաջանում այն ժամանին, թե ինքնակամ կերպով իր իրավունքն իրականացնել առելով ի՞նչ հասկանալ:

ԱԽՖՍՀ Քր. Որ. պարզաբանում ե՝ անկախ սահմանաված իշխանությունից՝ իր իրավունքների ինքնակամ իրականացում. Աւկրաինական Քր. Որ. ել ամենի ճիշտ ե մատնաշում, ինքնականորեն, այսինքն անկախ որենիք կամ համապատասխան կանոներով սահմանված կարգից՝ իրավունքի իրականացում: Այդ նշանակում ե, վոր իր իրավունքի ինքնակամ իրականացումը կայանում է հենց իրավունքը վոչ այն կարգով իրականացնելում, վոր սահմանված ե որենքով կամ համապատասխան կանոնիքով: Այսուղ, վորտեղ իրավունքը իրականացնելումը տեղի յե ունենում առանց որինական կարգը խախտելու, այսուղ ել հենց ինքնիրավշություն չկա:

Քաղաքացիների կողմից նրանց պատկանած այս կամ այն իրավունքների իրականացման կարգը կարգավորվում է համապատասխան որենքներով և կանոններով (որինակ՝ Քաղաքացիական որենսդրով, Աշխատանքի՝ որենսդրով, Ամուռնության, ընտանիքի և խնամակալության մերժերաքաղաքով և այն և այլն): Բնումին մի ամբողջ շարք դեպքերում իրավունքների իրականացումը, մասնավորապես այն ժամանակ, յերբ այդ շոշափում ե ուրիշ անձնա-

վորությունների շահերը, պահանջում է իշխանության որդանների մէջամտություն (դատարկան որդաններ, մէլլցիայի որդաններ, վարչական մյուս որդաններ և այլն): Այսպես, որինակ, քաղաքացին լսու որինքի իրավունք ունի ազատվող ընտակելի տարածության վրա, բայց այդ իրավունքը նա կարող է իրականացնել միայն, յերբ կդիմի համապատասխան որդանների (անային կառավարչության, խորհրդի բնակարանային բաժին, դատարան և այլն) և միայն այդ որդանների միջոցով: Կամ վորեւ մի քաղաքացի իր սեփական իրը ժամանակավորապես տվել ե պահպանության մյուս քաղաքացուն: Իրը պահպանության տվող քաղաքացին որինական իրավունքը ունի հետ ստանալու իր իրը: Բայց յեթե այդ իրը պահպանող քաղաքացին իրը կամովին հետ չի վերաբերձնում սեփականատիրոջը, վերջինը կարող ե՝ այդ իրը հետ ստանալու իր իրավունքն իրականացնել միայն դիմելով դատարկան որդաններին:

Հենց այն դեպքերում, յերբ քաղաքացին իր իրավունքը իրականացնում է չդիմելով համապատասխան որդաններին, թեև այդ ե պահանջում որենքը, այլպիսի քաղաքացին կատարում է հանցագործություն՝ ինքնիրավշություն: Վերեւում բերված որինակներում, առաջինում՝ քաղաքացին ինքնակամ կերպով, չդիմելով վոչ բնակարանային բաժնին, վոչ դատարանին, զբաղեցնում է աղատվող բնակարանային տարածությունը, յերկրորդում՝ քաղաքացին, չդիմելով դատարանին, ինքնակամ կերպով իրը խլում է այն անձնավորությունից, վորի մոտ այդ իրը պահպանության ե տված: Ենթառ դեպքում առկա կիխի հանցագործություն, վոր նախատեսված ե ԱԽՖՍՀ Քր. Որ. 90-րդ հոդվածով:

Ինչպես ԱԽՖՍՀ Քր. Որ. 90-րդ հոդվածում, այնպիս ել միութենական մյուս հանրապետությունների Քր. Որ. Համապատասխան հոդվածներում նկատի յե առնված ուրիշի կողմից վիճարկվող իրավունքի ինքնակամ իրականացումը: Այսուղ նկատի յե առնված ուրիշ անձնավորության շահերի խախտման հնարավորությունը: Քրեական որինակքերի ցուցումներն ինքնիրավշության ժամանակ ուրիշ անձնավորության շահերի խախտման մասին շատ եյական նշանակու-

թյան ունեն քննարկվող հանցագործությունն ըմբռնելու համար: Այստեղ, վորտեղ իրավունքի ինքնակամ իրականացման ժամանակակիցն իրախավորմ ուրիշ անձնավորության կամ հիմնարկության շահերը, չկա նաև հանցակազմ: Արինակ՝ բնակարանի պատասխանատու լրացմակարդը, ցանկանալով վշացումից պահպանել բնակիչների իրերը, առանց բնակիչների համաձայնության այլ իրերը տեղաշարժում և այնպիսի տեղ, վորտեղ իրերն առաջովիճակ կլինեն վշացումից: Բերգած դեպքում ինքնիրավության հանցակարգ չկա, վորովհետեւ պատասխանատու վարձակարողի դործությունները, թեև ինքնակամորեն են կատարվել, չեն իրախուել բնակիչների շահերը, այլ ընդհակառակը՝ ուղղված են բնակիչների շահերի պաշտպանության:

Ուրիշ անձնավորության կողմից վիճարկվող իր իրավունքի ինքնակամ իրականացումը և ուրիշ անձնավորության իրավունքի խախոռումը կարող ե ուղեկցվել անհատի վերաբերմամբ բռնություն գործադրելով: Արինակ, քաղաքացին ինքնակամորեն ազատելով մենակը, դուրս և հրում այլ սենյակի բնակիչներին, հարգածներ և ծեծ հանցելով նրանց: Արդարիսի դեպքերում առկա կլինի յերկու հանցագործություն՝ ինքնիրավություն և հանցագործություն անհատի դեմ՝ հարվածներ և ծեծ հասցնելով (ԹիֆՍՀ Քր. Որ: 146-րդ հոդ.):

Ինքնիրավությունն ել կարող ե ուղեկցվել նաև ուրիշ դույքի վոչնչացումով և մեասումով: Այդպիսի դեպքերում քրեական պատասխանատվությունը պետք ե վրա համար ինքնիրավության, ինչպես նաև դույքի վոչնչացման կամ վեստելու համար (ԹիֆՍՀ Քր. Որ: 175-րդ հոդ.):

Ինքնարկված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը կարող ե տեղի ունենալ միայն այն պայմանով, յերբ իր իրավունքն ինքնակամ իրականացնող անձնավորությունը գիտակցում եր, վոր ինքն իր իրավունքն իրականացնող կարգից: Այս դեպքերում, յերբ իր իրավունքների ինքնակամ իրականացումը կատարում և պաշտոնատար անձնավորությունը, ըստվորում վրա համար ողտագործում և պաշտո-

նեական դրությունը, առկա կլինի պաշտոնեական հանցագործություն՝ իշխանադանցություն: Արինակ՝ անային կառավարիչն ինքնակամ կերպով, առանց դատարանին դիմելու, բնակարանի բնակիչներին դուրս և անում բնակմարձը չմուծելու համար:

Ինքնիրավությունն ըստ ԹիֆՍՀ Քր. Ար. պատժվում է աշխատանքային ուղղիչ աշխատանքներով մինչև 6 ամիս ժամանակով կամ տուգանքով մինչև 500 ռուբլի:

Սակայն հարկավոր և նկատի ունենալ, վոր պրակտիկայում հանդիպում են ինքնիրավության շատ անշահանգույթներ, վորոնք չեն հետեւյնում քաղաքացիների այս կամ այն իրավունքների լուրջ խախոռում: Այդ գեղղեցրը մեծ ժամանակամատք են բնակաբանային պայմանների հետ: Արինակ՝ վորեւ քաղաքացի նախատեսնակում տեղաշարժում և իր հարեանի իրերն ուրիշ տեղ: Այլպիսի գործողությունների բացահայտ անհանության և վորեւ վնասակար հետեւյնքների բացակայության հետեւանքով այդպիսի գործողությունները չեն կարող դիտել վորպես քրեականորուն պատժելի արարք: Խոկ այլպիսի «ինքնիրավչական» գործողությունների համար սկսած քրեական գործերը պիտի կարճմին:

Գ Լ Ո Ւ Խ III

ԴԱՏԱՐԱՆԻ ՅԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՈՐԴԱՆՆԵՐԻ ԽՆՏԻՐՆԵՐՆ ԽԵՆԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԴԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՄՊԱԿՈՂ ՊԱՅԹԱՐՈՒՄ

Դատարանի և դատախազության որդանները, համապատասխան ընկեր Ստալինի ցուցումների այն մասին, վոր «...որենքների կայունությունը մեզ հիմա հարկավոր և, քան յերբեք...», պետք ե ճշտությամբ, հաստատ և անշեղ կերպով կիրառեն քրեական որենքները բոլոր նրանց դեմ, ովքեր այս կամ այն ձեռվ վոտնձում են իշխանության խորհրդային որգանների ուղիղ և նորմալ գործունեցության դեմ:

Դատարանակազմության նոր որենքը պահանջում է,

վորպեսզի արդարագատությունը ԽՍՀՄ մեջ հրականացվիր «բոլոր դատարանների համար միասնական և պարտադիր քրեական, քաղաքացիական և գաստավարական որենսդրությամբ»։ Այդ նույնակեն նշանակում եւ, վոր բոլոր հանցագործությունները, այդ թվում և իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործությունները, պետք է նիշտ վորակվեն ԽՍՀՄ-ում գործող քրեական որենքների և մասնավորաբես գործող ԽեթֆՍՀ Քրեական Ռիենսդրքի հիմանվրա:

Դժբախտաձար մի չարք ժողովրդական դատարաններ դեռևս բավարար չափով չեն յուրացըլ քրեական որենքների ճիշտ և ուղիղ պահպանման նշանակությունը։ Ժողովրդական դատարանների դատական պրակտիկայում դեռևս կան դեպքեր, յերբ իշխանության որդանների դեմ ուղղված այս կամ այն հանցագործությունը սիամ և վորակվում, բացահայտորեն խախտելով գործող քրեական որենսդրության պահանջները։ Շատ հաճախ, որինակի, իշխանության ներկայացուցչին վիրավորանք հասցնելը ժողովրդական դատարանները վորակում են վոչ թե ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդվածի, ինչպես այդ սիտի կատարվեր, այլ ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 74-րդ հոդվածի, այսինքն վորակի խորիշականություն։ Սակայն իշխանության ներկայացուցչին հասցրած վիրավորանքը և խորիշանությունը միանդամայն տարբեր հանցագործություններ են, թեև նրանք նախառնությամբ են միևնույն գլխում՝ «այլ հանցագործություններ վարչակարգի դեմ»։ Հաճախ են իշխանությանը ցույց արփող դիմադրությունը ևս (ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդ.), այնուամենայնիվ, ՌԽՖՍՀ Քր. Որ. 74-րդ հոդվածով վորակի խորիշանությունը վորակի կեղծերը։ Այսպես, նախկին Ազգութեանույնական յիրկամասի Մոստովսկիի ույոնի ժողովրդական դատարանը 1937 թ. քաղ. Ս.-ին ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 74-րդ հոդ. 2-րդ մասի դատապարտեց Յարշական ազատազրկման այն բանի համար, վոր քաղ. Ս.-ն, ներկայանալով միլիցիայի բաժանմունք՝ նախորյակին իրենից խրված գոկումենտները ստանալու համար, հրապարակային վիրավորանք հասցրեց միլիցիայի բաժանմունքի հեր-

թապահին՝ նրա կողմից իր պաշտոնեական պարտականությունները կատարելու ժամանակ։ Բնդամին քաղ. Ս.-ն ուրիշ հանրայնորդին վտանգավոր, մասնավորապես խռովագանական վոչ մի գործողություն չի կատարել։ Առկային իշխանությանը վիրավորանք հասցնելու տիպիկ հանցակազմ, վոր նախառեալված է ՌԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդվածով։ Իսկ ժողովրդական դատարանը, արհամարհելով Քր. Որ. պահանջները, Ս.-ի կատարած արարքը վորակեց ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 74-րդ հոդվածի՝ վորակի խուլեպանություն։

Ժողովրդական դատարանների դատական պրակտիկայում հանդիպում են քրեական պատասխանառության յինթարկելու գեպքեր Քր. Որ. այնպիսի հոդվածներով, վորոնք նախառեալված են իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործությունների համար հանրայնորեն գտանդապոր գործողությունների համար վարայի համար որդանների վարակ, վորոնք ամենների ել չեն հանդիսանում հանցագործություններ՝ ուղղված իշխանության որդանների դեմ և վորոնք պետք է վարակվեն ՌԽՖՍՀ Քր. Որ. հասուել մասի մյուս գլուխների հոդվածներով (որինակ՝ ամհատի դեմ ուղղված հանցագործությունների գլուխ, գույքային հանցագործությունների վերաբերյալ գլուխ և այլն)։ Այսպիս, Վորոնեժի մարզի Վոդովանսկի ույոնի ույոնական տարբերական դատարանը Տ.-ին դատապարտեց ըստ ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդ. 1-ին մասի (1937 թվականին)՝ 2½ տարվա ազատազրկման այն բանի համար, վոր Տ.-ն, լինելով հաբբած, դիմադրություն և ցույց տվել կոլտնտեսության վարչության նախագահին և կոլտնտեսության բրիգագիրին, վորոնք փորձում եյին Տ.-ից խլել կոլտնտեսության ձին, վորին Տ.-ն ինքնակամ կերպով տարել եր հոտից այդ ձին կոլտնտեսության բակը հասցնելու նպատակով։ Տ.-ն, դիմադրելով կոլտնտեսության նախագահին և բրիգագիրին, ընդոմին նրանց միքանի հարվածներ և հասցրել։ Տվյալ զեպքում ժողովրդական դատարանը միանդամայն սիամ կերպով Տ.-ի գործողությունները վորակել է ՌԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածով, քանի վոր վո՛չ կոլտնտեսության նախագահը, վո՛չ ել կոլտնտեսության

բրիգադիրը չեն հանդիսանում իշխանության ներկայացուցիչներ, ուստի և նրանց ցույց արված դիմադրությունը չի կարող վորակիլ ըստ ԱԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածի վրագեն դիմադրություն իշխանությանը: ԱԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածը, ինչպես այդ մասին վերևում ցույց արվեց, նախառակում և միայն իշխանության ներկայացուցիչներին դիմադրություն ցույց տալը, և վոչ թե ամեն մի պաշտոնաւոր անձնային որության: Քանի վոր կոլտնտեսության նախագահին ցույց տրված դիմադրությունը վերևում բերված որբնակում ուղեկցվել և ծեծ և հարվածներ հասցնելով, այն պետք է քրեական պատասխանատվություն հետևցնի ըստ ԱԽՖՍՀ Քր. Որ. 146-րդ հոդ. 1 մասով, վորպես հարվածներ և ծեծ հսկցնել:

Հանցագործության սխալ վորակումը անխռուսափելիորեն բերում և աղավագումներ պատճի կիրառման ասպարեզում:

Ազորինարար հանցավոր այս կամ այն գործողությունները ավելի վատանգավոր հանցագործությունների հոգվածներով վորակիելով, գատարաններն այդպիսի դեպքերում բոլորվին անհիմն կերպով ավելիացնում են պատճիը: Եեվ, ընդհակատակը, ազորինարար ավելի սպակաս վտանգավոր հանցագործությունների վերաբերյալ Քր. Որ. հոդվածները կերպում, գատարանները միանգամայն անհիմն կերպով նվազեցնում են պատճիը: Դրանում հեշտությամբ կհամոզվենք, յեթե նայենք, թե ինչպիսի միանգամայն տարրեր աեսակի պատճիներ են նախառական որենսդրքերով տարբեր հանցագործությունների, և մասնավորապես իշխանության որպանների գեմ ուղղված տառանձին հանցագործությունների համար: Այսպես, որինակ, ԱԽՖՍՀ Քր. Որ. 73-րդ հոդվածի 1-ին մասը, վորը խոսում է իշխանությանը դիմադրելու ժամին, վոր ուղեկցվում է բանությամբ, նախառակում և պատճի 1-ից մինչև 10 տարվա աղատազրկում: Խոկ ԱԽՖՍՀ Քր. Որ. 75-րդ հոդվածը, վորը հետապնդում է իշխանությանը չենթարկիլը, նախառակում և պատճի միայն կամ հարկադիր աշխատանքներ մինչև 3 ամիս ժամանակով կամ ել տարբանք մինչև 300 ռուբ.: Կամ, որինակ, ԱԽՖՍՀ Քր. Որ. խուլդանության վերաբերյալ 74-րդ հոդվածի յերկրորդ

մասում նախառակում և պատճի աղատազրկում մինչև 5 տարի ժամանակով, այն ժամանակ յերբ ԱԽՖՍՀ Քր. Որ. 76-րդ հոդվածը, իշխանության ներկայացուցչին վիրավորներ հասցնելու վերաբերյալ, մատնանշում և պատճի միայն աշխատանքային-ուղղիչ աշխատանքների ձեռվ մինչև 6 ամիս ժամանակով, կամ տուգանք՝ մինչև 500 ռուբրի:

Սակայն այս կամ այն հանցագործության և մասնավորապես իշխանության որդանների գեմ ուղղված հանցագործությունների սխալ վորակումը վոչ միայն շատ բացասարար և անզրագանում պատճիը կիրառելու վրա, այն անիմականորեն խախտում և անհատի շահերը: Մեղաղը ամենայն ել մեկ չի, նույնիսկ հենց նույն պատճի ժամանակ, թե ինքը դատապարտիլ ե, որինակ, չարամիա խուլդանության կամ իշխանությանը չենթարկիլու կամ վիրավորելու համար:

Ահա թե ինչու իշխանության որդանների գեմ ուղղված հանցագործությունների գեմ մղվող պայքարում դատարանի և դատախաղության որդանների կարևորակույն խընդիրներից մեկը հանդիսանում է քրեական որենսդրքի պահանջների ճիշտ և անչեղ պահպանումը, այդ հանցագործությունների նիշը և որինակ վորակումը, այդ հանդիսանում և սոցիալիստական արդարադատության իրականացման կարևորակույն պայմաններից մեկը:

Ճիշտ և ուղիղ վորակման հետ միասին իշխանության որդանների գեմ ուղղված հանցագործությունների գեմ մղվող պայքարում հոկայական նշանակություն ունի նաև այդ հանցագործությունների համար նիշը պատճի նշանակելիք:

ԱԽՖՍՀ գործող Քրեական որենսդրքը, ինչպես նաև միութենական մյուս հանդապետությունների քրեական որենսդրքը, գատարաններին լայն հարաբերություններ են լնձեռում իշխանության որդանների գեմ ուղղված այս կամ այն հանցագործության համար պատճի ընտրելու խմասուով:

Այդ գատարաններ հնարավորություն և տալիս իրականացնելու անհատական մոտեցումը պատճիը վորոշելու ժամաստության

մահակ : Ընկ . Վիշինսկին ասում եր . «Հարկավոր ե դատարաւնից պահանջել խիստ ինդիվիդուալ պատիժ , հիշելով , վորտարքերությունը բանտի տարիների միջև ամեն մի աշխատավոր մարդու , ամեն մի դատապարտվածի համար պակաս նշանակություն չունի և վոչ միայն դատապարտվածի , այլև պրոլետարական պետության , համար , վորը ընդունակ է գնահատել մարդկանց , վորպես ամենաթանգարին կապիտալ :

Ներկայումս մենք այլելի քան յերբեք պետք ե պահանջնելք , վորպեսզի մեր վորոշած պատիժները համապատասխանեն այս կամ այն մարդու ինդիվիդուալ վնասին , անհամապես արտահայտված հանցագործությանը : Տատանումներն այդ տեսակետում պետք ե վճռական կերպով մերժվեն » (Վաշինսկի , Ռечь товарища Сталина 4 мая и задачи советской юстиции , «Сов. Зак.» 1935 г. , стр. 54):

Դժրախտարար ժողովրդական դատարանների պրակտիկայում նկատվում է այլ յերեսույթ : Շատ հաճախ ժողովրդական դատարաններն իշխանության որդանների դեմ ուղղված այս կամ տիր հանցագործությունների համար պատիժ վորոշելու ժամանակ (որինակ՝ իշխանությանը դիմադրելու , ինքնիրավության և ուր.) զուամեխանիկորեն են մոտենում և նշանակում են իշխանության որդանների դեմ ուղղված հանցագործությունների համար այս կամ այն հոդվածով նախատեսված ամենից բարձր պատիժը : Բնուամին ժողովրդական դատարանները յերեմն հողովրդական դատարանները յերեմն բոլորովին հաշվի չեն առնում այն , թե կատարված հանցագործության հետևանքով արդյոք վնաս կամ վնասույթ հասցված է իշխանության որդանների ճիշտ գործունեյությանը , և վոչ այն , թե ինչպիսի հանգամանքներում և ինչպիսի դրդապատճառներում է կատարված այս կամ այն հանցագործությունն իշխանության որդանների դեմ , և վոչ ել , վերջապես , մեղադրյալի անձնավորությունը (հասակը , նրա պաշտոնեական դրությունը , նրա հասարակական գործունեյությունը և այլն , և այլն) :

Ժողովրդական դատարանների այլպիսի մոտեցումը պատիժը վորոշելուն՝ վոչ մի գեպքում չի կարելի ճիշտ հա-

մարել : Այն ուղղակի հակասում է խորհրդային քրեական որենքի պահանջներին , որենք , վորի մեջ (ՌԽՖՍՀ Քր . Որ . 45-րդ հոդ .) առվում է , վոր դատարանը պատիժը վորոշելու ժամանակ պետք է զեկալարպի :

ա) Քրեական որենսգրքի ընդհանուր մասի ցուցումներով :

բ) այն սահմաններով , վորոնք նախատեսված են հանցագործության տվյալ տեսակի համար հատուկ մասի հոդվածի մեջ :

գ) իր սոցիալիստական իրավագիտակցությամբ , յելինլով կատարված հանցագործության հանցագալությունից , գործի հանգամանքներից և հանցագործություններից :

Ժողովրդական դատարանները՝ իշխանության որդանների դեմ ուղղված այս կամ այն հանցագործության ժամանակից մեղադրյալին պատիժը ընտրելու ժամանակ պետք է յերեմն ՌԽՖՍՀ Քր . Որ . 45-րդ հոդվածի պահանջներից : Այդ նշանակում է , վոր ժողովրդական դատարանները պարտավոր են պատիժը վորոշելու ժամանակ հաշվի առնել հիմնական հետեւյալ պարմանները .

ա) առկա յեր արդյոք ավարտված հանցագործություն իշխանության որդանների դեմ թե հանցագործության համար նախապարասատում և հանցափորձ ե տեղի ունեցել (ՌԽՖՍՀ Քր . Որ . 19-րդ հոդ .) .

բ) իշխանության որդանների դեմ կատարված հանցագործությունն արդյոք վորեւ վնաս պատճառել է իշխանության որդանների ճիշտ գործունեյությանը , թե չի պատճառել .

գ) իշխանության որդանների դեմ ուղղված այս կամ այն հանցագործության համար մեղադրյալն արդյոք հանդիսանում եր հանցագործություն կատարողը կամ կազմակերպիչը , թե մեղադրյալն այլպիսի հանցագործության դըրդիչ կամ քողարկիչ եր (ՌԽՖՍՀ Քր . Որ . 17-րդ և 18-րդ հոդ . հոդ .) :

դ) արդյոք հանցագործությունը՝ իշխանության որդանների դեմ կատարվել է գիտակցաբար թե անզգուշաբար (ՌԽՖՍՀ Քր . Որ . 10-րդ հոդ .) .

ե) վորոնք են իշխանության որդանիների դեմ կատարված այս կամ այն հանցագործության դրդապատճառները (որինակ՝ ստոր դրդապատճառներ, վրիժառության, չահաբանդրական դրդապատճառներ և ուր.) :

զ) ով է իշխանության որդանների գեմ՝ ուղղված հանցագործության մեղադրյալը (արդյոք աշխատավոր է, վորը պատահաբար է այդ հանցագործությունը կատարել, թե ապագաստկարգայնացած սուբյեկտ է, վորը մի շարք անդամ գատվել է նման հանցագործությունների համար և այլն):

Միայն վերեռում հիշված Հանգամանքները հաշվի առնելով դատարանը կարող է ճշտորեն փորոշել այն անձնավորության պատիժը, վորը Հանցագործություն է կատարել իշխանության որդանների դեմ:

Անհրաժեշտ է մատնանշել, վոր մի շարք գեղքերում
դատարանները պետք է կարծեն իշխանության որդանների
դեմ կատարիած հանցադորդությունների քրեական մեղա-
դբանքի գործերը: Այսուեղ, վորանեղ վոռանձությունն իշ-
խանության որդանների ճիշտ գործունեյության դեմ բա-
ցահայտորեն չնչին է և վոչ մի վնասակար հետևանքներ
չի պատճառել, ժողովրդական դատարանները պետք է կար-
ճեն այդպիսի քրեական գործերը ՌԽՖՍՀ Քր. Որ. Երդ-
չող. ծանոթության հիման վրա:

Միայն իշխանության որդանների գեմ ուղղված այս
կամ այն հանցագործությունների ճիշտ վորակումը, ինչ-
պես նաև այդ հանցագործությունների համար ճիշտ պատիժ
նշանակելը կարող են յերաշխիք հանդիսանալ իշխանության
որդանների գեմ ուղղված ամեն տեսակի վոտնձգության
գեմ մղվող պայքարի հաջողության համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

ԳԼՈՒԽ I.	ԽԱՀՄ-Ի ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԸ ՊԱՐՏԱՎԱՐ ԵՆ ՆՊԱՍՏԵԼ ԽՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԱՄՐԱՅ- ՄԱՆՆ ՈՒ ՈՒԺԵՂԱՅՄԱՆԸ	3
ԳԼՈՒԽ II.	ՀԱՆՅԱԿՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆ- ՆԵՐԻ ԴԵՄ, ՎՈՐՈՇԻ ՆԱԽԱՏԵՍՊԱԾ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ	5
	1. Իշխանությանը չենթարկվելը	9
	2. Իշխանության ներկայացուցիչներին դիմագրելը .	11
	3. Իշխանության ներկայացուցիչներին բռնադատելը .	20
	4. Պաշտոնատար՝ անձերի և հասարակական աշխա- տողներին սպառնալը	23
	5. Բանություն պաշտոնատար՝ անձնավորությունների և հասարակական աշխատողների վերաբերյալ . . .	29
	6. Իշխանության ներկայացուցչին վիրավորանք հսո- ցնելը	33
	7. Իշխանությունը յուրացնելը	39
	8. Ինքնիրավություն	44
ԳԼՈՒԽ III.	ԴԱՏԱՐԱՆԻ ՅԵԿ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԽԸՆ- ԴԻԲՆԵՐԸ ԽՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂԱՎԱԾ ՀԱՆՅԱԿՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՄԴԱՐԴ ՊԱՅՔԱ- ԲՈՒՄ	49

Թարգմ. Ռ. Փորտուլյան

Խմբագիր Ա. Մամյան

Սըբագրիչ Ա. Մանուկյան

Գոնսեռու սըբագրիչ Լ. Աբովյան

Պատվեր № 285, տիրած 1000

Սառագրիկ և տպագրելու 2/IV 1941 թ.

Գինը 80 կ.

Քաղաքական դրականության պետական հրատարակչության տպարան,

Երևան, Ալլահվերդյան № 65

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65

Վ. 2071

ՀՀ Ազգային գրադարան



NL0215193

36.173

ԳՐԱԴԱՐԱՆ 80 Կ.

В. Г. МЕНЬШАГИН
ПРЕСТУПЛЕНИЯ ПРОТИВ ОРГАНОВ
ВЛАСТИ

(На армянском языке)

Издание НКЮ Арм. ССР
Ереван 1940